59. См. РГВИА, ф. 38, Департамент ГШ, оп. 7, д. 448, л. 47.
60. См. Национально-освободительная борьба народов Северного Кавказа и проблемы мухаджирства. Нальчик 1994, с. 76.
61. См. РГВИА, ф. 38, Департамент ГШ, оп. 7, д. 470, л. 1 об.
62. См. Г. А. Дзагуров, указ. раб., с. 10.
63. Там же, с. 27.
64. См. Ах. Цаликов, указ. раб., с. 21.
65. См. Г. А. Дзагуров, указ. раб., с. 147.
66. См. Я. Абрамов. Кавказские горцы. Краснодар, 1927, с. 11.
67. См. Национально-освободительная борьба. с. 133.
68. См. Н. Г. Волкова, Этнический состав населения Северного Кавказа в XVIII — начале XX века. М. 1974, с. 221.
69. См. Центральный Государственный Исторический Архив Республики Грузия (ЦГИА РГ), ф. 416, оп. 3, д. 146, л. 6.
70. Там же.
71. См. Я. Абрамов, указ. раб., с. 7.
72. См. Р. Фадеев, Письма с Кавказа. с. 152.
73. Там же.
74. См. "Birleşik Kafkasya", N 1, Istanbul, 1964, s. 12.
75. См. Ад. Берже, Выселение горцев в Турцию — "Русская старина", т. XXXIII, СПб., 1882, N 1, январь, с. 167.
76. См. А. П. Берже, Этнографическое обозрение Кавказа. СПб., 1879, с. 12.
77. См. Л. Г. Лопатинский, Заметки о народе адыге вообще и кабардинцев в частности. — СМОМПК, 1891, вып. XII, с. 5.

78. См. А. Х. Касумов, указ. раб., с. 13.
79. См. Д. Е. Еремеев, *Этногенез турок (происхождение и основные этапы этнической истории)*. М. 1971, с. 171.
80. См. Alexandre Grigorianz, *Kafkasya Halklari. Tarihi ve Etnografik Bir Sentez*, Istanbul 1999, s. 96.
81. Ibid.
82. См. Р. Г. Ланда, *Ислам в истории России*, М. 1995, с. 113.
83. Там же, с. 149.
84. См. В. Е. Давидович, С. Я. Суций, *Этнические и региональные факторы в формировании культуры юга России*. — кн. "Цивилизации и культуры", вып. 3, "Россия и Восток: геополитика и цивилизационные отношения", М. 1996, с. 212.
85. См. Abdullah Saydam, *Kırım ve Kafkas Göçleri (1856–1876)*, Ankara 1997, s. 91.
86. Ibid.
87. Ibid.
88. Ibid.
89. Ali Kemal Meram, *Türk – Rus İlişkileri Tarihi*, Istanbul 1969, s. 460.
90. İsmail Berkok, *Tarihte Kafkasya*, Istanbul 1958, s. 529.
91. Erel Nerefettin, *Danistan ve Danistanlılar*, Istanbul 1961, s. 128.
92. Kemal H. Karpat, *Ottoman Population 1830–1914. Demographic and Social Characteristics*, Madison 1985, p. 69.
93. Hızal Ahmed Hazer, *Kuzey Kafkasya*, Ankara 1961, s. 49.
94. Ahmed Cevad Eren, *Türkiye' de Göç ve Göçmen Meseleleri*, Istanbul 1966, s. 35.
95. Musa Kunduhov'un *Hatıraları*, Istanbul 1978, s. 15.
96. *Rumeli'den Türk Göçleri*. cilt 1, 2. Ankara 1989.
97. General Salih Polatkan, *Kafkasya'dan Osmanlı İmparatorluğ'a Yapılan Göçler*. – "Kuzey Kafkasya", yıl: 11, sayı: 66–67, Mart – Nisan – Mayıs, 1987, s. 7.
98. Cemal Fener, *Çerkes Ethem Olayı*, Istanbul 1997, s. 22.
99. Abdullah Saydam, *Kırım ve Kafkas Göçleri (1856–1876)*, Ankara 1997, s. 91.
100. *İslam Ansiklopedisi*. – *Çerkesler*. s. 354.
101. *Türk Ansiklopedisi*, cilt 10, s. 465.
102. "Nokta", yıl: 8, sayı: 25, 24 Haziran 1990, s. 94.
103. İzzet Aydemir, *Göç. Kuzey Kafkasyalıların Göç Tarihi*, Ankara 1988, s. 109.
104. Kaffi Kadircan, *Türkiye'ye Göçler*, Istanbul 1966, s. 30.
105. Psimaho Kosok, *Kuzey Kafkasya: Hüriyet ve İstiklal Savaşı Tarihinden Yapraklan*, Istanbul 1960, s. 31.
106. Vassan Giray Cabağı, *Kafkas – Rus Mücadelesi*, Istanbul 1969, s. 453.
107. Hayri Ersoy – Aysun Kamacı, *Çerkes Tarihi*, Istanbul 1994, s. 119.
108. "Guaze", yıl: 1, sayı: 2, 10 Nisan 1911, s. 2.

109. Mohammad Kheir Haghandogha, *The Circassians. Origin, History, Customs, Traditions, Immigration to Jordan*. Amman 1985, p. 29.
110. Shaukat Mufti, *Heroes and Emperors in Circassian History*, Beirut 1972, p. 269.
111. Hayati Bice, *Kafkasya'dan Anadolu'ya Göç*, Ankara 1959, ss. 51–52.
112. Nihat Berzeg, *Tehcir al-Sirakasat*, Amman 1987, p. 82. (на араб. яз.)
113. П. Трехо, указ. раб., с. 118.
114. Peter Alford Andrews, *Ethnic Groups in the Republic of Turkey*, Wiesbaden 1989, p. 237.
115. R. Konqvist, *The Soviyet Deportation of Peoples*, London 1960, p. 8.
116. K Saks, *Geschichte des Zerfalls die Türkei*, Viena 1908, S. 372.
117. Justin McCarthy, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, New-York – London 1983, p. 2.
118. *Loghatname Dehkhoda*. vol. 5, Tehran 1373 (1995), p. 2215. (на перс. яз.)

**ԹՈՒՐԲԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ
ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ**

1908 թ. Օսմանյան հեղափոխության հետևանքով տապալվում է արդուլիսմիդյան բռնակալությունը, և իշխանության են գալիս երիտթուրքերը: Վերահաստատելով սահմանադրական կարգերն ու համաշխարհային հասարակության առջև հանդես գալով որպես ազատախոհության պաշտպաններ՝ նրանք առաջին հերթին ցանկանում էին երկիրը հեռու պահել եվրոպական մեծ տերությունների միջամտություններից: Սակայն դա նրանց չհաջողվեց: Ազգային հարցում, որն ամենից շատ էր առիթ տալիս օտար միջամտությունների, նրանք որդեգրեցին Աբդուլ-Համիդի գործելակերպը և ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարեցին ավելի դաժան և բիրտ քաղաքականություն: Այսպես տրոհացման գաղափարի մեջ տեսնելով իրենց երկրի կործանումը՝ երիտթուրքերը կտրականապես հրաժարվեցին այդ իմաստով կատարել որևէ բարենորոգում:

Ամհամեմատ ծանր էր արևմտահայության կացությունը: Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգումները մնացին որպես մեռած տառ: Դրա փոխարեն երիտթուրքերը ավելի ուժեղացրեցին ճնշումներն ու բռնությունները՝ վերջնական նպատակ ունենալով հայ ազգի ֆիզիկական ոչնչացումը:

Կայսրությունում չլուծված ազգային հարցը բախումների պատճառ հանդիսացավ, որոնցից էր նաև 1912 թ. ծագած Բալկանյան 1-ին պատերազմը, որի արդյունքում Թուրքիան պարտվեց և կորցրեց իր եվրոպական տիրույթները: Սա որոշակի հույսեր ներշնչեց հայ քաղաքական շրջանակներին՝ օգտագործելու համար ներկա պատեհ առիթը՝ Թուրքիայի թուլության ու Արևելյան հարցի վերաբացման առումով, և միջազգային սեղանի վրա նորից դնելու հայկական բարենորոգումների խնդիրը: Հայ ժողովուրդն իր մեծամասնությամբ խնդրի նման լուծման մեջ

* Հովակիմ Բոյաջյանը ԳԳ Պատմության ինստիտուտի ասպիրանտ է:

հանդես եկավ միասնաբար: «Հատուածական, դաւանական կամ կուսակցական նկատումները,— գրում էր արևմտահայ հայտնի գործիչ Վ. Փափազյանը,— բախտորոշ այդ օրերուն ջրացած էին թուրքիոյ հայութեան միտքէն»¹:

Ինչպես և անցյալում, թրքահայութիւնն իր խնդրի լուծման հույսերը մեծամասամբ կապում էր Ռուսաստանի՝ որպես ամենաշահագրգիռ պետութեան հետ: Սակայն հայ քաղաքական շրջանակները, հաշվի առնելով Հայկական հարցի միջազգային բնույթը, գիտակցում էին, որ Ռուսաստանը, առանց մյուս տերութիւնների հետ համաձայնեցնելու, թուրքահայաստանի նկատմամբ միայնակ չէր կարող քայլեր ձեռնարկել: Այդ իսկ պատճառով կարևորվում են դիմումները մեծ տերութիւններին:

Պոլսի Ազգային Պատրիարքարանը, թուրքահայոց խնդրի լուծման ամենաշահագրգիռ կողմը լինելով հանդերձ, չէր կարող իր վրա ստանձնել այս գործը: Պատրիարքարանի նման քայլը թուրքական կառավարութեան կողմից կդիտվեր որպես դավաճանութիւն՝ առաջ բերելով եվրոպական միջամտութիւն երկրի ներքին գործերին: «Բացարձակապէս անհնար է,— կաթողիկոսին ուղղած նամակում գրում էր պատրիարքի քարտուղար Գ. Պալաքյանը,— Ազգային Պատրիարքարանիս յայտնի կէրպով գործին մէջ մխրճվիլ որ կրնայ ոչ միայն օգտակար չըլլալ, այլև աղետաբեր հետեւանքներ ունենալ»²:

Ուստի այս առաքելութիւնն իր վրա է վերցնում Ամենայն Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսը, որն իր՝ 1912 թ. նոյեմբերի 10-ի N1482 կոնդակով եգիպտահայ հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային նշանակում է իր ներկայացուցիչն եվրոպական երկրներում բարենորոգումներ թուրքիայի հայկական վիլայեթների պահանջելու համար: Ստանձնելով այս պաշտոնը՝ Պ. Նուբարն իր գլխավորութեամբ կազմում է Ազգային Պատվիրակութիւն և մեծ տերութիւնների մայրաքաղաքներում ծավալում եռանդուն գործունեութիւն՝ ղեկավար շրջանակների և հասարակական կարծիքի վերաբերմունքը ի նպաստ թուրքահայոց խնդրի դարձնելու համար:

Մեծ տերութիւնների ղեկավար շրջանակներին ուղղած իր դիմումներում Պ. Նուբարը ջանում էր հիմնավորել հայկական բարենորոգումների իրականացման անհետաձգելիութիւնը և դրանցում ցույց տալ տերութիւնների շահը: Զաջածանոթ լինելով թուրքահայոց խնդրի անցյալին՝ Պ. Նուբարը գիտակցում էր, որ բարենորոգումների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է իրական երաշխիք, առանց որի դրանք կմնային որպես մտած տառ, ինչպես դա եղել էր անցյալում: Նման երաշխիք կարող էր հանդիսանալ միայն մեծ տերութիւնների վերահսկողութիւնը: Եվ հենց եվրոպական վերահսկողութեան պահանջն էլ

հանդիսացավ Պ. Նուբարի՝ տերությունների ղեկավար շրջանակներին ուղղված դիմումների անկյունաքարը. «Փորձը ցույց տուած է, — գրում էր նա, — որ բարենորոգումները երբ հակակշռով մը չեն պաշտպանված, ճակատագրականօրէն խոստումի վիճակին մէջ կը մնան և եթէ նոյն իսկ գործադրութեան դրուին, քիչ ատենէն կը դադրին»:

Արևմտահայության պահանջներից այս կետն էր, որ ամենից շատ հանդիպեց թուրքական իշխանությունների կատաղի դիմադրությանը, որոնք փորձում էին ցույց տալ դրա անօրինականությունը: Թուրքական «Թասֆիհի Էֆքյար» թերթը արևմտահայերի այդ պահանջը համարում էր «խկությունն ու սահմաններն անծանոթ կարգի պահանջ»⁴: Մինչդեռ դա կեղծիք էր: Դեռևս 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր հայաբնակ նահանգներում բարենորոգումներ կատարել՝ մեծ տերությունների վերահսկողության ներքո: Այդ մասին Պ. Նուբարը գրել է. «Օսմանեան կառավարութիւնը հակակշիռը ընդունելով նոր զիջողութիւն մը չըներ, այլ միայն կատարած կ'ըլլայ յանձնառութիւն մը գոր իր նախորդները ընդունած են և որով ինքն ալ կապուած է»⁵:

Թեև Պ. Նուբարի պաշտոնն էր մեծ տերություններից պահանջել բարենորոգումների իրականացումը, սակայն նա մեծ կարևորություն էր տալիս այն բանին, որպեսզի թուրք ղեկավարներն իրենք և՛ զգան դրանց անհրաժեշտությունը: Նա հասկանում էր, որ ինչքան էլ մեծ տերությունները ճնշում գործադրեն Թուրքիայի վրա, միևնույն է, բարենորոգումների ընդունումն ու իրականացումը մեծապես պետք է կախված լինի նրա կամքից և, հետևաբար, ճնշման տակ ընդունված բարենորոգումների իրականացումը ամեն կերպ կխոչընդոտվեր կառավարության կողմից: Այս մասին «Մաբահ» թերթի խմբագիր Տ. Քելեկյանը գրում էր. «Այս խնդիրը թուրքերում ալ յօժարութիւնովը պիտի լուծվի — Ռուսիա չի կրնար ֆերման մը հրատարակել Հայոց համար, ֆերմանը նորէն Թուրքերը պիտի հրատարակեն»⁶:

Ցանկանալով խուսափել թուրքական կառավարության հակառակություններից՝ Պ. Նուբարը փորձում էր ցույց տալ հայերի պահանջների չափավորությունն ու օրինականությունը, ինչպես նաև՝ որ հայերը չունեն ոչ մի հետին նպատակներ և ոչ մի պետության (հատկապես Ռուսաստանի) ձեռքին խաղալիք չեն դարձած: «Պատգամատրութիւնը, — գրում էր նա, — յանուն Հայերու չպահանջեր ոչ բաժանում, ոչ անկախութիւն, ոչ քաղաքական ինքնաւարութիւն, այլ միայն Պերլինի Դաշնագրին 61-րդ յօդուածովը խոստացուած բարենորոգումները»⁷:

Պ. Նուբարի պահանջով Ազգային Պատվիրակությանը անդամակցում են միայն թուրքահայերը, ցույց տալու համար, որ Պատվիրակության կազմությունը ոչ մի պետության կողմից չի ներշնչվել:

Թուրքիայի ղեկավար շրջանակների կասկածները իր գործունեության մկատմամբ չհարուցելու համար է, որ Պ.Նուբարը 1912 թ. ղեկտնմբերի կեսերին այցելում է Ֆրանսիայում թուրքական դեսպան Ռիֆաթ փաշային և հիմնավորում հայկական բարենորոգումների չափավորությունը: Սակայն սրա հետ մեկտեղ պետք է ասել, որ Պ.Նուբարը ոչ մի հավատ չընծայեց թուրքերին՝ բարենորոգումներ մտցնելու խնդրում և երբեք չհրաժարվեց եվրոպական վերահսկողության պահանջից: Կաթողիկոսին գրած 1913 թ. փետրվարի 10-ի նամակում նա ընդգծում էր. «Պատվիրակությունը երբեք չի հավատում Դոան խոստումին և անտրամաբանական է համարում բանակցել նրա հետ»⁶:

Սակայն չնայած այս ամենին Թուրքիայի ղեկավարները կատաղի պայքար մղեցին եվրոպական վերահսկողությամբ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման դեմ: Նրանք չփորձեցին դրանցում տեսնել իրենց պետության շահը: Եվրոպական վերահսկողության տակ իրականացված բարենորոգումները ազդակ կհանդիսանային Օսմանյան կայսրության ասիական տիրույթների տարածքային ամբողջականության պահպանման համար և թույլ չէին տա այդտեղ ոչ մի պետության և հատկապես Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը, մի բան, որին դեմ էին մեծ տերությունները: Թուրքական իշխանությունների հիմնական նպատակն էր ամեն կերպ խուսափել երկրի ներքին գործերին եվրոպական միջամտությունից, ուստի մեծագույն ջանքեր գործադրեցին նաև խափանելու համար Պ. Նուբարի գործունեությունը:

Սակայն թուրքական իշխանությունները Պ.Նուբարի վրա չունեին ոչ մի ազդեցություն՝ արգելել տալու համար նրա դիմումները: Միակ բանը, որ կարող էին անել՝ համոզել Պ.Նուբարին ուղղակի բանակցությունների մեջ մտնել իրենց հետ: Մրանով փաստորեն Եվրոպային ցույց կտրվեր, որ հայկական բարենորոգումների հարցը կլուծվի հայերի և թուրքերի համաձայնությամբ, և անհմաստ կդառնար տերությունների միջամտությունը այդ խնդրում: Ուստի ձեռնարկվեցին բոլոր հնարավոր միջոցներն այդ նպատակին հասնելու համար:

Պ. Նուբարի գործունեության հենց սկզբում մեծ վեգիր Քյամիլ փաշայի կառավարությունը, արտգործնախարար Գ. Նորատունկյանի միջնորդությամբ, փորձ կատարեց նրան հրավիրել Կ.Պոլիս՝ բարենորոգումների վերաբերյալ խորհրդակցելու: Կահիրեի «Յուսաբեր» թերթը իրավացիորեն այս հրավերը որակեց որպես «հրավեր հայկական դատի հուղարկավորությանը»⁷: Պ.Նուբարը, քաջ գիտակցելով դրա բացասական հետևանքները, հրաժարվում է մեկնելուց: Վ.Մալեզյանին ուղղած 1913 թ. հունվարի 3-ի նամակում նա գրում էր. «Եթե ընդունիմ այդ հրավերը, ազգային իշխանութեանց եւ հայրենակիցներուս կողմէ ինձի հանդեպ ցույց տրուած

վստահութեան արդիւնքը եղող կացութիւնը, պիտի տկարանայ ամուլ փինաբանութիւններով»¹⁰:

Պ.Նուբարի՝ ուղղակի թուրքական կառավարության հետ բանակցելու անհրաժեշտության մասին թուրքական «Բեյամ» թերթը գրում էր. «Պ.Նուբարը փոխանակ մեր մայրաքաղաքը գաւ և մեզ հետ ձեռք ձեռքի տալու, նույն իսկ ի հարկին մեր կառավարության մեջ պաշտոն ստանձնելով բարենորոգումների ծրագիրն ի գործ դնել աշխատելու, ինչու է հարկադրված զանազան երկրներ պտտել և այսքան կարևոր գործի համար բանակցել մեր օգուտը այնքան չմտածողների հետ»¹¹:

Թուրքական իշխանությունների՝ եվրոպական վերահսկողությամբ բարենորոգումների իրագործման դեմ պայքարը իր արտացոլումը գտավ նաև թուրքական մամուլում: Ինչպես իթքիհադական («Թանհին», «Թաս-ֆիրի Էֆքյար», «Թերջումանը Հակկիկաթ», «Ժեռն Թուրք»), այնպես էլ ընդդիմադիր իթիլաֆական («Բզդամ», «Ազմ», «Յենի Գազեթա») թերթերը հայերին ներկայացնում էին որպես թուրք ազգի թշնամիներ, իսկ նրանց դիմումները տերություններին որակում որպես դավաճանություն: Մամուլի մաման հարձակումներից զերծ չմնաց նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պ.Նուբարը, որը փաստորեն հանդիսանում էր այդ դիմումների կրողն ու իրագործողը: Թուրքական թերթերում պարբերաբար սկսեցին երևալ հոդվածներ, որտեղ քննադատության էր ենթարկվում Պ.Նուբարի գործունեությունը, միտումնավոր կեղծվում նրա պաշտոնի էությունը, սխալ մեկնաբանվում նրա դիմումները: Մրա միակ նպատակն էր ինչպես թուրքական, այնպես էլ եվրոպական հասարակությանը ցույց տալ հայերի՝ մեծ տերություններին դիմելու անօրինականությունը: Նման հոդվածների նպատակներից էր նաև, ինչպես գրել էր թուրքական «Թանհին» թերթը, «սրբագրել նրա (Պ.Նուբարի-Հ.Բ.) ողջամտության վրա վստահություն ունեցողների մտքերը»¹²:

Նախ, ջանքեր գործադրվեցին կասկածի տակ առնելու Պ.Նուբարի առաքելության՝ արևմտահայերի համար բարենորոգումներ պահանջելու օրինականությունը: Այսպես՝ անգլիական «Թայմզ» թերթի 1913 թ. մայիսի 12-ի համարում Կ.Պոլսից ուղարկված մի տեղեկագրում նշվում էր, թե իբր Պ.Նուբարը ոչ թե թուրքահայերի, այլ Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող հայերի ներկայացուցիչն է¹³: Պ.Նուբարը նույն թերթում հերքեց այդ լուրը: Այս ուղղությամբ ավելի ակնհայտ կեղծիքով թուրքական «Ազմ» թերթը գրում էր. «Պողոս Նուբարի նախագահության տակ կազմված հանձնաժողովը Կաթողիկոսին դիմելով՝ հայոց անունով պաշտոնական հանգամանք ստանալու արտոնություն է խնդրել: Կաթողիկոսն իրեն հատուկ զգուշությամբ և վերապահությամբ այդ արտոնությունը չի տվել»¹⁴:

Նման կեղծ հայտարարությունները, բնականաբար, չէին կարող ազդել

Պ.Նուբարի գործունեության վրա: Սակայն թուրք իշխանությունները բնավ չհրաժարվեցին իրենց մտադրություններից՝ ամեն գնով խափանել Պ.Նուբարի առաքելությունը: Այս իմաստով հատկանշական է Պ.Նուբարին ներկայացված շատ ծանր, բայց միաժամանակ ամբողջովին անհիմն մեղադրանքը, թե իբր նա խառնվել է Թուրքիայի ներքին գործերին: Այս մեղադրանքի ներկայացման առիթը հանդիսացավ այն պարզ քաղաքավարական հանդիպումը, որը Պ.Նուբարը Փարիզում ունեցել էր իթիլաֆական կուսակցության առաջնորդներից մեկի՝ Շերիֆ-փաշայի հետ: Վերջինս Արդու-Համիդ-2-ի կառավարման տարիներին եղել էր Ըվեդիայում Թուրքիայի դեսպանը: 1913 թ. հունվարյան հեղաշրջումից հետո, երբ Թուրքիայում իշխանությունը նորից նվաճում են իթթիհադականները, Շերիֆն իր մի շարք համախոհների հետ մահվան է դատապարտվում, ապաստան գտնում Ֆրանսիայում և իր հիմնած «Մեշրուքիեթ» թերթում դատապարտում իթթիհադականների վարած քաղաքականությունը և նրանց՝ իշխանությունից հեռացման կոչեր անում: Լինելով Եգիպտոսի մի իշխանուհու ամուսինը՝ նա ծանոթ էր Պ.Նուբարի հետ: Իրենց հանդիպման ընթացքում Պ.Նուբարը Շերիֆին ներկայացրել էր արևմտահայերի պահանջները: Վերջինս, արդարացի գտնելով դրանք, իր թերթում ի պաշտպանություն հայկական բարենորոգումների հանդես էր եկել մի շարք հոդվածներով: Հենց այս նկատառումով էլ թուրքական «Թասֆիրը էֆթյար» թերթը, իր 1913 թ. հունիսի 18-ի համարում, ակնհայտորեն կեղծելով փաստերը, գրում էր. «Շերիֆ-փաշան, Պ.Նուբարի հետ գործակցելով, հայկական հանճաժողովին (Ազգային պատվիրակությանը-Հ.Բ.) օժանդակած և նրանց ծրագիրը ընդունած է: Այս հանճաժողովի բաղձանքի ու դիտավորությունների որ աստիճան վնասակար ու խռովարար լինելը կարելի է ըմբռնել նրա՝ Շերիֆի հետ գործակցելուց, ծանոթ լինելով, որ Շերիֆի բոլոր գործունեության ձեռնարկները հայրենիքը կործանելու, բնաջինջ անելու նպատակ ունեն»¹⁵:

Այս պնդումը ոչ մի քննադատության չի դիմանում: Ամբողջովին անհիմն է այն դատողությունը, թե եթե Շերիֆ-փաշան համամիտ է եղել Պ.Նուբարի հայացքներին, ապա Պ.Նուբարն էլ իր հերթին պետք է ընդունի Շերիֆի հայացքները և միանա նրան՝ Թուրքիայի իշխանությունների դեմ պայքարում: Ավելին՝ պետք է ասել, որ Շերիֆ-փաշան ընդունել էր միայն բարենորոգումների անհրաժեշտությունը, սակայն ինչպես և իթթիհադականները, միանգամայն դեմ էր եվրոպական վերահսկողությանը: Դա պարզորեն երևաց իթիլաֆականների՝ իշխանության գլուխ գտնվելու ընթացքում: Իսկ Շերիֆի հայտարարություններն ուղղված էին ոչ թե արևմտահայության բարելավմանը, այլ ավելի շուտ նրանց համակրությունը շահելուն և ավելորդ անգամ Թուրքիայի իշխանավորներին քննադատելուն:

Իր դեմ ուղղված մեղադրանքները, բնականաբար, միանգամից հերքվեցին Պ.Նուբարի կողմից. «Մեր հետապնդած նպատակը հույժ բացահայտ է, իմ գործները մեջտեղ են և ծածկելիք բան չունենալն հայտնի է: Ես միշտ հեռու մնացած եմ Թուրքիայի ներքին քաղաքականության խնդիրներից»¹⁶:

Նման մեղադրանքը, որի հիմնական նպատակն էր վարկաբեկել Պ.Նուբարին՝ ցույց տալով, որ նա խառնվել է Թուրքիայի ներքին գործերին, կուսակցական պայքարին և նպատակ ունի «կործանելու և բնաջինջ անելու հայրենիքը», կարող էր մեծ հարցականի տակ դնել նրա հետագա գործունեությունը և հայկական հարցի նպաստավոր լուծումը: Կաթողիկոսին ուղղած մամակում Պ.Նուբարը ընդգծում էր, որ «այս գրպարտությունները ուզում են որպես քաղաքական զենք գործածել իմ գործունեությունը խաթարելու համար»¹⁷:

Եվ, իրոք, այս կեղծ հայտարարությունը որոշակի կասկածներ առաջ բերեց մեծ տերությունների և հատկապես Ռուսաստանի ղեկավար շրջանակներում: Քանի որ Պ.Նուբարը, ի շահ թրքահայոց խնդրի լուծման, պատրաստակամություն էր հայտնել (բնականաբար, ոչ պաշտոնապես) իր գործունեության ընթացքում հետևել ռուսական կառավարության հրահանգներին, ուստի Թուրքիայի նկատմամբ իր այդ քայլերը մույնպես կարող էին ընկալվել որպես Ռուսաստանի կողմից տրված հրահանգ: Այդ իսկ պատճառով Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը կաթողիկոս Գևորգ Ե-ին գրած 1913 թ. մայիսի 24-ի մամակում շեշտում էր. «Հայկական բնակչության ներկայացուցիչների նման արարքները կարող են հնարավորություն տալ թուրքական կառավարությանը ծանր մեղադրանքներ առաջադրել հայերի դեմ և խիստ դժվարացնել Կայսերական կառավարության խնդիրը՝ հայերի համար ցանկալի բարենորոգումների անցկացման գործում»¹⁸:

«Թասֆիրի Էֆքյար»-ում տպագրված հոդվածի մյուս նպատակներից էր Պ.Նուբարի գործունեության և ընդհանրապես հայերի դեմ գրգռելու մոսուլմանական բնակչությանը: Այդ նպատակին էր ծառայում նաև մույն թերթում տպագրված մեկ այլ հոդվածը, ուր խոսվում էր հայկական բարենորոգումներին ի նպաստ Պ.Նուբարի և Բեքստունի գործակցության մասին: Վերջինս լռելուցանալով ստղծված Բալկանյան կոմիտեի նախագահին էր և պրոպագանդիստական մեծ աշխատանք էր կատարել բալկանյան ժողովուրդների՝ թուրքական լծից ազատագրելու համար: «Բեքստունի պես մարդու հետ Պ.Նուբարի գործակցելը, - գրում էր թերթը, - բնական է, որ զոհ չի ձգի ոչ մեկ օսմանցու և ոչ էլ իր բարյացակամության մասին հավաստիք կտա մեզ»¹⁹:

Պ.Նուբարի՝ եվրոպական մայրաքաղաքներում ծավալած գործունեու-

թյան հետևանքով խիստ սրվել էին հարաբերությունները թուրքական կառավարության և Ազգային Պատրիարքարանի միջև: Վերջինս գտնվում էր դժվարին կացության մեջ: Թեև պատրիարքը շարունակում էր օրինական ճանապարհով թագրիրներ ներկայացնել Բ.Պառն՝ բողոքելով արևմտահայության ծանր վիճակի համար, բայց միաժամանակ նա գտնվում էր նամակագրական կապի մեջ Պ. Նուբարի հետ՝ նրան տալով որոշակի կարգադրություններ՝ որպես թուրքահայոց խնդրին ամենաժանոթն ու առաջին շահագրգիռը: Սակայն նման ընթացքը հղի էր վտանգներով և հայտնի դառնալու դեպքում կարող էր որակվել որպես դավաճանություն: Այս մասին Ջավեն պատրիարքը գրում էր. «Կարևոր էր, որ մեր գործակցությունը Պօղոս Նուբարի հետ հնար եղածին չափ գաղտնի պահուի կառավարութենն»²⁰:

Այս իմաստով արևմտահայության ձեռնարկած քայլերը պետք է լինեին շատ զգույշ և գաղտնաբար, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատրիարքարանում կային մեծ թվով թուրքական լրտեսներ: Այսպես, ցույց տալու համար Պատրիարքարանի մեղսակցությունը օտար միջամտությանը դիմելու մեջ, Թուրքիայի ներքին գործերի նախարար Ռեշիդ բեյը 1912 թ. դեկտեմբերին հայտարարում է, որ նա իրազեկ է Պատրիարքարանի, կաթողիկոսի և Պ.Նուբարի միջև փոխանակված թղթակցություններին և նույնիսկ ունի դրանց պատճենները: Սակայն հետագայում պարզվեց, որ այս հայտարարությունը չէր համապատասխանում իրականությանը:

Օտար միջամտությունից խուսափելու համար թուրքական կառավարությունը, թեև անարդյունք, սկսեց ջանքեր գործադրել բարենորոգումների իրականացման վերաբերյալ բանակցությունների մեջ մտնելու Կ.Պոլսի հայոց պատրիարքի և ազգային գործիչների հետ: Սրա նպատակն էր տերություններին ցույց տալ թուրքերի պատրաստակամությունը խնդիրը լուծել հայերի հետ համաձայնությամբ և անհիմաստ դարձնել Պ.Նուբարի դիմումները: Այս մասին Վ.Փափազյանն իր հուշերում գրում էր. «Բանակցութեանց նպատակն է արգելել պետութեանց միջամտութիւնը և բերել տալու Ազգ. Պատուիրակութեան պետ Վսեմ Նուպար փաշան որպէսզի հիմէն անդամահատեն մեր երուպական գործունեութիւնը»²¹:

Ներքին գործերի նախարար Թալեաթը մի շարք հանդիպումներ է ունենում Ջավեն պատրիարքի հետ, խոստանալով օսմանյան խորհրդարանում ապահովել հայ պատգամավորների ընտրությունը՝ հայերի պահանջած թվով, եթե պատրիարքը հայ ժողովրդի անունից մի մանիֆեստ հրապարակի, հայտարարելով, թե նա հավատում է օսմանյան կառավարության Անատոլիայում գործադրելիք բարենորոգումներին²²: Միաժամանակ կառավարությունը փորձեց նորից մերժեցնալ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության անդամների հետ: Տեղի ունեցան

Թալեաթի, Խալիլ բեյի, Միդհատ Շուքրիի հանդիպումները Ալնունու, Գ. Փաստրմաջյանի, Վարդգեսի, ինչպես նաև Գ. Զոհրապի հետ՝ համոզելու համար հրաժարվել արտաքին ուժերին դիմելուց:

Կառավարության այս քայլերը իրենց արձագանքը գտան մամուլում: Այսպես «Թասֆիրը էֆքյար»-ը գրում էր. «Հայերը կ'ան պետք է հայտարարեն, որ Փարիզից Բեռլին թափառող պատվիրակությունն իրենց կ'անըզլ չէ, որ իրենք լիապես գոհ են թուրք ներկա ռեժիմից, կ'ան պիտի խզեն Բ. Դռան հետ իրենց կապերը»²¹:

Մրա հետ մեկտեղ կառավարությունը որոշակի քայլեր կատարեց նաև ուղղակի Պ. Նուբարի հետ համաձայնության գալու ուղղությամբ: Այս նկատառումով Պ. Նուբարի հետ Փարիզում հանդիպումներ են ունենում Թուրքիայի ֆինանսների նախարար Զավիդ բեյը, օսմանյան ելանտական պատվիրակության նախագահ Նալիմ բեյը, Ֆրանսիայում Թուրքիայի նախկին դեսպան Մունիր փաշան, իսկ Լոնդոնում՝ Անգլիայի թուրք դեսպան Թեֆիկ փաշան և Լոնդոնի կոնֆերանսում Թուրքիայի ներկայացուցիչ Հազզը փաշան: Նման հանդիպումների նպատակն էր Պ. Նուբարին հավաստիացնել, որ կառավարությունը հայերի կացությունը բարվոքելու համար մտադիր է իրականացնել բարենորոգումներ և համոզել հրաժարվել արտաքին միջամտությունից: Թեև այս ձեռնարկները ոչ մի արդյունքի չհասան, բայց և այնպես թուրքական «Ժեմի Թուրք», թերթը հիմնվելով «լավատեղյակ» աղբյուրների վրա, գրում էր, թե Պ. Նուբարը, համոզված լինելով, որ թուրքերը պետք է բարեկարգեն Անատոլիան, որոշել է հրաժարվել Ազգային Պատվիրակությունից²²:

1913թ. վերջերին, երբ հայկական բարենորոգումների իրագործման շուրջ ծավալված բանակցությունները մոտենում էին ավարտին, Բ. Դուռը ձեռնարկում է Ազգային Պատվիրակության գործունեության ձախողման վերջին փորձը: Դեկտեմբերի 3-ին Մեծ Վեզիր Սալիդ Հալիմը իր ֆրանսիական դեսպան Ռիֆաթ փաշայի միջոցով Պ. Նուբարին հրավիրում է Կ. Պոլիս՝ բանակցելու բարենորոգումների վերաբերյալ: Պ. Նուբարը բնականաբար մերժում է այս առաջարկը: Կաթողիկոսին ուղղած 1913թ. դեկտեմբերի 19-ի նամակում նա գրում էր. «Չիս հրափրելու նպատակն է ժամանակ շահելով և՛ իբր թե բարենորոգումներ գործադրելով, Պետութիւնները կատարված իրողութեան մը առջև դնելն է»²³: Թուրքական կառավարության խորամանկ քայլերի հետևանքները քաջ գիտակցում էին նաև Ազգային Պատրիարքարանում և Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը: Դեսպան Գիբսը Ֆրանսիայում իր պաշտոնակից Իզմիլսկուն գրում էր. «Ես գտնում եմ, որ նրա (Պ. Նուբարի-Հ.Բ.) գալը իսկապես առիթ կտա ժամանակի ավելորդ ձգձգմանը՝ իր հետ անմիջական բացատրությունների պատրվակով»²⁴:

Պատմական տվյալ ժամանակաշրջանում հայկական հարցի շուրջ մեծ տերությունների միջև ծավալված թեժ պայքարն, ի վերջո, ավարտվեց 1914 թ. հունվարի 26-ի հայկական վիլայեթներում բարենորոգումների անցկացման ռուս-թուրքական համաձայնագրով:

Սակայն այս պայմաններում էլ թուրքական կառավարությունը ամեն ինչ արեց բարենորոգումների իրականացումը խոչընդոտելու համար: Իթքիհադական առաջնորդներից Ջեմալ-փաշան իր հուշերում գրում էր. «Հայկական վիլայեթներում բարենորոգումների վերաբերյալ պայմանագիրը մեզ համար չուներ էական նշանակություն»²⁷:

1914 թ. փետրվարի 17-ին Մեծ Վեզիր Սայիդ Հալիմը Պ.Նուբարին գրած նամակում առաջարկում է «բարենորոգումների գործադրութեան համար, իր նախագահած Դահիլիի մեջ նախարարական պաշտոն մը ստանձնել»²⁸: Այս քայլը կրում էր զուտ ձևական բնույթ և նպատակ ուներ ցուցադրել կառավարության՝ բարենորոգումների իրագործման պատրաստակամությունը: Պ.Նուբարը փետրվարի 25-ի պատասխան նամակում մերժում է այս առաջարկը՝ պատճառաբանելով, որ «ոչ մեկ փորձառու չի ունի Թուրքիոյ հանրային կենսքին մասին ու որուն լեզուն չի խոսում իսկ»²⁹:

Արևմտահայության այդ չնչին ձեռք բերվածին, սակայն, վիճակված չէր իրականանալու: Երիտթուրքերը, օգտվելով Առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից, ոչ միայն չեղյալ հայտարարեցին վերոհիշյալ համաձայնագիրը, այլև իրականացրեցին հայերի ցեղասպանությունը: Նման պայմաններում «չմոռացվեց» նաև Պ.Նուբարը, որի՝ պատերազմի նախօրյակին ծավալած գործունեությունը մեծ անհանգստություն էր պատճառել թուրքական իշխանություններին: 1915 թ. օգոստոսին Կ.Պոլսի զինվորական դատարանը մի շարք մտացածին մեղադրանքներ է ներկայացնում Պ.Նուբարին, որոնց թվում էր նաև այն, որ նա, «օգտվելով Թուրքիայի՝ Բալկանյան պատերազմի հետևանքով առաջացած թուլությունից, որպես ամբողջ հայ ազգի պատվիրակ, գլխավորել է հայկական կոմիտեն և Եռյակ Համաձայնության տերությունների մայրաքաղաքներում օսմանյան կառավարության դեմ քայլեր է ձեռնարկել արտասահմանյան վերահսկողության ներքո անկախ Հայաստան ստեղծելու նպատակով», և ավելացվում էր, որ դատարան չներկայանալու դեպքում նա կդատապարտվի հեռակա կարգով, կզրկվի իր ունեցվածքից, քաղաքացիական իրավունքներից, զինվորական կոչումներից և պարգևներից»³⁰:

Այս մեղադրանքը կարծես փոխհատուցումն էր այն անհաջողությունների, որ թուրքական իշխանությունները կրել էին նախընթաց շրջանում՝ արդյունքի չհասնելով Պ.Նուբարի և նրա գլխավորած պատվիրակության գործունեությունը խափանելու փորձերում:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին երիտթուրքերը, որդեգրելով իրենց նախորդների քաղաքականությունը, համդես եկան արևմտահայության անտանելի կացության բարելավմանը, հատկապես եվրոպական վերահսկողության տակ, ուղղված յուրաքանչյուր ձեռնարկի դեմ՝ չփորձելով դրանում տեսնել իրենց պետության շահը: Այս իմաստով քացառություն չկազմեց Պ.Նուբարի ծավալած գործունեությունը, որի խափանման համար թուրքական իշխանությունները, թեև ամառայունք, օգտագործեցին իրենց ձեռքից եկած բոլոր միջոցները՝ չխորշելով նույնիսկ ստոր քայլերից:

Զմայած նման վերաբերմունքին՝ Պ.Նուբարը, հաջողությամբ վարելով ստանձնած պաշտոնը, իր գործունեության ընթացքում Թուրքիայի համդեսայ դրսևորեց շատ զգույշ կեցվածք՝ փորձելով չդիպչել նրա շահերին ու ինքնասիրությանը, և համդես չեկավ հակաթուրքական ոչ մի հայտարարությամբ կամ քայլով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ.Փափազյան, Իմ յուշերը, հտ. 2, Բեյրութ, 1952, էջ 208:
2. ՀՀ Մ.Սաշտոցի անվ. Մատերանադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, քրթ. 238, վավ. 64, ք.1:
3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.33, ք.13:
4. «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, N 5196, 1913 ք:
5. Ե.Օտեան, Պօղոս Փաշա Նուպար (կենսագրական նօթեր), Կ.Պոլիս, 1913, էջ70:
6. Վ.Սալեզեան, Ճամբուս ծայրը, հտ. Բ, Փարիզ, 1955, էջ 47:
7. Ե.Օտեան, նշվ. աշխ., էջ 76:
8. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 28:
9. «Յուսաբեր», Կահիրե, N 166, 1913.
10. Վ. Սալեզեան, Ճամբուս վրայ (Յուշաքաղ), Բարիզ, 1950, էջ 307:
11. «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, N 5209, 1913:
12. «Ժամանակ», Կ.Պոլիս, N 1643, 1913:
13. Ե. Օտեան, նշվ., աշխ., էջ 74:
14. «Ժամանակ», Կ.Պոլիս, N 1448, 1913:
15. Նույն տեղում, N1481, 1913:
16. «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, N 5087, 1913:
17. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.5, գ.43, ք. 4:
18. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆ., ց.1, գ. 206, ք. 9.

19. «Աշակ», Թիֆլիս, N140, 1913:
20. Ջավեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս. Վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947, էջ 34:
21. Վ.Փափազյան, նշվ. աշխ., էջ 542:
22. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հտ. Բ, Փարիզ, 1935, էջ 73:
23. «Չորիզոն», Թիֆլիս, N 273, 1913:
24. «Ազգ», Բոստոն, N 49, 1913:
25. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, ք. 61.
26. АВПРИ РФ, ф. 151 Политархив, оп. 482, г.1913, д. 3465, л.60:
27. Джемаль Паша, Записки 1913—1919 гг., Тифлис, 1923, стр. 233.
28. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 58, ք. 42:
29. Նույն տեղում, ք. 43:
30. Ա. Օհանջանյան, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 194:

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԸՍՏ ԷՐԶՐՈՒՄԻ ԵՎ ԱՆԱԼՑԻԱՅԻ
ՆԱԳԱՆԳՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ**

Հայոց ցեղասպանության հիմնահարցի վերաբերյալ թուրքական պաշտոնական պատմագրության կողմից ներկայացվող հայեցակարգում առանձնակի տեղ է հատկացված հայերի՝ որպես օսմանյան կայսրության ժողովուրդների մեջ առավել բարեկեցիկ կյանքով ապրող, բայց տերության նկատմամբ երախտամոռ կեցվածք դրսևորած ազգի «հանգամանքներին»։ Այլ կերպ ասած, վկայակոչելով Կ.Պոլսի հայ մեծահարուստ ամիրայական դասի, այդ թվում՝ կառավարական շրջանակներին մոտ կանգնած հայազգի գործիչների կյանքի անհամեմատ բարվոք պայմանները, թուրքական պաշտոնական շրջանակներն ու պատմաբանները «զարգացնում են» վաղուց հայտնի այն կեղծ վարկածը, թե ինչպես առաջին համաշխարհային պատերազմի, այնպես էլ դրա ողջ մախրոդ ժամանակաշրջանում հայերը, ապրելով բարեկեցիկ պայմաններում, չունենալով լուրջ դժգոհության պատճառներ, արտաքին ուժերի, հատկապես Ռուսաստանի դրդմամբ, քանիցս դիմել են ապստամբական գործողությունների, իրականացրել պառակտչական գործողություններ՝ հավաստելով իրենց անհավատարմությունը հայրենի պետության հանդեպ։ Ի պատասխան որի՝ պատերազմի տարիներին կառավարությունը հարկադրված իրագործել է «դավաճան» հայերի տեղահանություն և տարագրություն՝ ռազմաճակատի գծից հեռու «ապահով» վայրեր։ Բայց ցավալիորեն, ճանապարհին՝ համաճարակների, քրդերի հարձակումների հետևանքով տարագիրներն ունեցել են զոհեր, ընդ որում՝ պատերազմական վիճակով թելադրված, ոչ պակաս կորուստներ են ունեցել նաև իրենք՝ թուրքերը։ Այսինքն՝ փորձ է արվում կենդանություն տալ երկուստեք զոհ լինելու հնացած վարկածին՝ դրանով իսկ ժխտել ցեղասպանության

* Աշոտ Մելքոնյանը պատմ. գիտությունների դոկտոր է, ՀՀԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն։

իրողությունը: Հատկանշական է, որ այս վտանգավոր թեզը նկատելի է ոչ միայն հայոց եղեռնի փաստը ժխտող պատմաբանների ու քաղաքական գործիչների մոտ, այլ նաև՝ այն ընդունող հեղինակների աշխատություններում: Նույնիսկ իր հայացքներով թուրքական պատմագրության մոտեցումներից էապես տարբերվող Թամեր Ալչամի հայեցակարգում առկա է այն միտքը, որ հայերին տեղահանելու կառավարության գործողությունները թելադրված էին կայսրությունը պահպանելու մտահոգությամբ:

Թուրքական կողմի վերոնշյալ «փաստարկները» հերքելու նպատակով փորձենք համառոտակի անդրադառնալ օսմանյան տիրապետության հաստատման շրջանից մինչև առաջին աշխարհահամարտն ընկած ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տեղաբաշխման, նրա նկատմամբ իշխանությունների որդեգրած ժողովրդագրական քաղաքականության ընդհանուր միտումների՝ հենվելով արևմտահայ մի քանի նահանգների վերաբերյալ մեր կատարած ուսումնասիրությունների վրա:

Օսմանյան Թուրքիան, 15-րդ դարի երկրորդ կեսին հաղթանակներ տանելով թուրքմենական ցեղերի նկատմամբ, բռնագավթեց Հայաստանի մեծագույն մասը: Նվաճված երկրամասում թուրքական սուլթանների վարչաժողովրդագրական քաղաքանությունը պայմանավորվեց մահմեդական վերնախավի պզգային-քաղաքական ու տնտեսական շահերով, աչքի ընկավ անկայունությամբ ու մշտատև փոփոխություններով:

Մինչև 1530-ական թվականները Արևմտյան Հայաստանի տարածքում ձևավորվեցին Էրզրումի (Կարնո), Սեբաստիայի, Կարսի, Վանի, Դիարբեքիի, Ախալցխայի էյալեթները¹: Ի՞նչ ժողովրդագրական իրավիճակ էր Արևմտյան Հայաստանում 15-րդ դարի վերջից մինչև 17-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում: Տարբեր աղբյուրների համադրությունից պարզորոշ երևում է, որ չնայած նախորդ ժամանակաշրջանում երկրամասում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոգործընթացին, երկիրը հիմնականում բնակեցված էր տեղաբնիկ հայ տարրով, որի կողքին առանձին գավառներում հատգեհոտ հայտնվում էին եկվոր էթնիկական այլ խմբեր: Այսպես, օրինակ, 16-րդ դարի վերջին ըստ թուրքական մի հարկացուցակի՝ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» Չլդրի (Ախալցխայի) նահանգի 1250 բնակավայրերում ապրող բնակիչների գերակշիռ մասը կրում էր հայկական ու վրացական կամ՝ հայերի ու վրացիների շրջանում մեծ տարածում ունեցող անուններ, այսինքն՝ երկրամասը քրիստոնեաբնակ էր: Մահմեդական անունների կարելի էր հանդիպել հատուկեմո դեպքերում²:

17-րդ դարի առաջին կեսին Էրզրումի էյալեթի 23 գավառների մեծ մասը, ըստ Հակոբ Կարնեցու, բնակեցված էր բացառապես հայերով³: Այն, որ

Էրզրումի հյուսիսային գավառները, որոնք առավել շատ էին կրել մահմեդական տարրերով բնակեցվելու օսմանյան կառավարության ձեռնարկումների ազդեցությունը, ունենալով հայ-թուրքական խառը բնակչություն, այնուհանդերձ, գերազանցապես հայաբնակ էին, և «տաճիկները» չնչին թիվ էին կազմում, թերևս երևում է մահ թուրք հետազոտող Միրօղլուի հրատարակած գրքից⁴, որում բերված տվյալներով, օրինակ Բաբերդի գավառում քրիստոնյաները 16-րդ դարում բնակչության անվիճելի մեծամասնությունն էին: Մակայն այս վիճակը երկար չուներ:

Հայատակ ժողովուրդների նկատմամբ լիակատար գերիշխանություն հաստատելու նպատակով սուլթանական կառավարությունը նվաճված երկրամասերն սկսեց բնակեցնել թուրքալեզու և իրանալեզու (գերազանցապես՝ քրդեր) ցեղերով: Արևմտյան Հայաստանում օսմանյան վարչամեքենան մտցնելու և տեղի բնակչությանը հարկման ենթարկելու խնդրով՝ արդեն 1478թ. Պոնտական լեռների հարավային ստորոտներով ձգվող Բաբերդի, Սպերի, Թորթումի և այլ գավառներ ուղարկվեց օսմանյան բանակի ամենաարյունոտ իրամանատարներից մեկը՝ Լալա փաշան: Նա կարճ ժամանակում ավերակների վերածեց պատմական Բարձր Հայքի և Տայքի հարյուրավոր հայկական բնակավայրեր, սրի քաջեց տասնյակ հազարվոր մարդկանց: Ավելի քան 50 հազար հայեր, փրկվելով ֆիզիկական ոչնչացումից, նախընտրեցին մահմեդականացումը⁵: Չանգվածային կոտորածներն ու մահմեդականացման դեպքերն ավելի հաճախակի դարձան, երբ 1512թ. սկսվեց թուրք-պարսկական երկարատև պատերազմը: «...ասպատակեալ քանդէին և աւերէին առհասարակ...,— գրում է ականատես հեղինակը,— մինչ ի դաշտն Մշու, Խնուսու և Ալաշկերտու, Դիաւնու և Խամուրայ, Բաթնոցայ և Պայագիտու, երկիրս ամեն երէին ու աւերէին, զկին և զտղայս գէրի ածէին...զի այնպէս անապատ արարին այս սահրաթ երկրորներս, որ Արզրումայ հետ մինչև Էրեվան միայն բերթորայքն ի շեն մնացին»⁶: Պարսկաթուրքական հաշտության կնքումից անմիջապես հետո՝ 1643թ., թուրքական կառավարության հանձնարարությամբ Արևմտյան Հայաստան ուղարկվեց Ջաֆար փաշան՝ «յոյժ անիրաւ և չարասէր..., ժանտաբարոյ...», որը աշխարհագիր անցկացրեց Էրզրումի նահանգում: Հարկապահանջությունն ու բռնություններն այնքան անտանելի էին, որ նահանգի հյուսիսային մի քանի գավառների քրիստոնյաներ «ի յահէն դարձան յօրէնսն Մահմէտի»⁷, այսինքն՝ մահմեդականացան: Չանգվածային մեկ այլ մահմեդականացման մասին վկայում է 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի պատմաբան-աշխարհագետ Դուկաս Ինճիճյանը. «Չամճրացեալք ի բռնութենէ և ի զրկանաց, դարձան (հայերը — Ա. Մ.) առհասարակ ի կրօնս տաճկաց»: Կրոնափոխությունն ընդգրկեց դարձյալ Էրզրումի նահանգի հյուսիսային

շրջանները: Բերդագրակի «բնակիչք առհասարակ էին յազգիս հայոց,— շարունակում է Ինճիճյանը,— այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն և սակաւ մնացին ի քրիստոնէից»:⁸

Քրիստոնյա բնակչության բռնի մահմեդականացումը գուգորդվում էր եկեղեցիների ոչնչացումով, ավերումով կամ մզկիթների վերածումով: 1662թ. Վանի անուճով մեծ մոլլայի և կայսրության զխալոք վեզիրի նախաձեռնությամբ բազմաթիվ «եկեղեցի Հոռոմոց (հույներ — Ա. Մ.) և Հայոց քանդեալ աւերեցին,— կարդում ենք աղբյուրներում,— և զլուխս ամենայն քրիստոնէից սեաւ գտակ անցուցին: Եւ առին այն եկեղեցին (խոսքը Էրզրումի միջնաբերդի եկեղեցու մասին է — Ա.Ա.) արարին իւրեանց մզկիթ և եղև սուգ մեծ ազգիս Հայոց»⁹:

1723թ. կազմակերպված հերթական ավերիչ արշավանքներից մեկի զոհը դարձավ Էրզրումի մահաճգի հյուսիսային մեկ այլ գավառ՝ Սպերը, որտեղ մոխրակույտերի վերածվեցին ավելի քան հարյուր հայկական գյուղեր¹⁰: Ամեն մի այսօրինակ, միջոցառում ուղեկցվում էր հայ բնակչության գերեվարությամբ. «Զօրքն տաճկաց գերեին ազգն հայոց և բերեալ վաճառէին, կամ բռնադատէին՝ թե ուրացիր գՔրիստոս, ոմանք հաւատան ուրացան և ոմանք, որք ոչ ուրացան, սրոյ ճարակ տային կամ վաճառէին...: Արզրումայ այնչափ գերեցին, որ մեք գրով ոչ կարացաք ճառել»¹¹:

Այս ամենին գումարվեցին թուրք-պարսկական պատերազմի արհաւիրքները: 1730—ական թթ. Կարսի և Ախալցխայի մահաճգներ ներխուժած Նադիր խանի զորքերը 6 հազ. հայերի բռնազաղթեցրին Պարսկաստան. «...Եւ գերեցին զՆարիմանու մահաճգն, զՋաւախէթու, զՎլորու և զԴայի Դուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ,— գրում է Աբրահամ Կրետացին,— Եւ քշեցին զայր ու զկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով ԶՌ (6000), որպես և լսեմք»¹²: Պատահական չէ, որ վերոհիշյալ երևույթների ազդեցությամբ արդեն 18-րդ դարի առաջին երեսնամյակին Ախալցխայի էյալեթի նոսրացած բնակավայրերում առանց բացառության՝ բոլոր գյուղատեղերը մահմեդականներ էին¹³: Այստեղ հայերի ու վրացիների զանգվածային մահմեդականացման հետևանքով ձևավորվել էր էթնոկրոնական մի համայնք՝ «մեսխեթցիներ» հավաքական անունով, որոնք իրենց շատ հատկանիշներով շարունակում էին հիշեցնել քրիստոնյաների: Դ.Ինճիճյանը, նկատելով այդ հանգամանքը և ներկայացնելով Ախալցխայի մահաճգի էթնիկ դիմախեղման պատկերը, գրում է. «Գիտօրէք այսր մահաճգի սակաւ ըստ մեծութեան նորա, յորս ընդ մեծի մասին երկին մինչև ցայժմ մենաստանք և եկեղեցիք մեծաշէնք, այլ կամ լքեալք և կամ քայքայեալք: Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տաճիկք, դարձեալ գրեթէ առհասարակ կա՛մ ի հայոց և կա՛մ ի վրաց» (ընդգծումն իմն է — Ա.Մ.)¹⁴: Այս

նահանգում մոտավորապես մեկ դարի ընթացքում տեղի ունեցած աղետալի ժողովրդագրական շարժը պատկերացնելու համար վկայակոչենք մի աղյուսակ, որի տվյալների մի մասը քաղել ենք «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարից», որոնք ներկայացնում են 16-րդ դարի վերջի վիճակը, և մյուս մասը՝ 17-րդ դարի վերջի և 18-րդ դարի առաջին երեսնամյակի պատկերն արտացոլող «Չլդրի էյալեթի ջարա դավթարից»¹⁵։ Ամմիջապես աչքի է զարնում այն փաստը, որ այդ ընթացքում շեշտակի նվազել էր նահանգի բնակավայրերի թիվը։ Բերենք տվյալներ հիմնականում պատմական Վերին Ջավախքի տարածքն ընդգրկող երեք գավառների օրինակով։

**Գավառի և գյուղախմբի
անվանումը**

**Բնակավայրերի թիվն
ըստ տարեթվերի**

1595 թ.

1694–1732 թթ.

1. Ախալքալաքի լիվայի նահիեններ

ա) Ակչեհիրի	84	33
բ) Թմուկի	22	7
գ) Նիալխոլուրի	33	17

2. Խերթվիսի լիվայի նահիեններ

ա) Անտառային Ջավախքի	69	23
բ) Խերթվիսի	38	19
գ) Ստվերոտ	—	2
դ) Բուզմարեթի	12	1

3. Չլդրի լիվայի նահիեններ

ա) Ջանբազի	51	22
բ) Գայլաբերդի	16	6
գ) Քանարբելի	33	12
Ընդամենը՝	358	142

Այսպիսով՝ մեկ հարյուրամյակ, կամ՝ մի փոքր ավելի անց, Ջավախքում հիշատակվող բնակավայրերի թիվը 358-ից կրճատվում է 142-ի, այսինքն՝ 2,5 անգամ։ Եթե նախկինում համոզիպում ենք միևնույն անունը կրող մի քանի գյուղերի՝ Վերին և Ներքին, Մեծ, Միջին և Փոքր, ապա այժմ նրանց մի մասն առհասարակ չի հիշատակվում, մյուսներն էլ նշվում են իբրև մեկական գյուղեր։

Բռնի մահմեդականացման, թուրքացման և բռնագաղթի հետ մեկտեղ

օսմանցիները ձեռնարկեցին Արևմտյան Հայաստանի էթնոնկարագիրը խաթարող մեկ այլ «միջոցառում»։ 16-րդ դարի սկզբներից Սեֆյան Իրանի դեմ ռազմաքաղաքական բուֆեր՝ պատմեշ ստեղծելու նպատակով թուրքական սուլթանները սկսեցին կայսրության հարավային և հարավարևելյան շրջաններից խրախուսել քրդերի ներհոսքը Հայկական լեռնաշխարհ։ Արդեն պարսկաթուրքական պատերազմի սկզբում՝ 1515թ. քուրդ ցեղապետերից մեկի՝ Էդրիսի օժանդակությամբ սուլթան Սելիմ Ահեդը իրեն ենթարկեց Դիարբեքիին. և նրանից հարավ տարածված քրդերին։ Ի փոխհատուցումն իր ծառայության՝ Էդրիսը ստացավ այդ շրջանների կառավարման իրավունքը և քոչվորական կյանքով ապրող իր հայրենակիցներին հարկադրեց տեղափոխվել Էրզրումի նահանգի տարածքը¹⁶։ Քրդական մեկ այլ վերաբնակեցում կազմակերպեց սուլթան Մուրադը 1635թ.։ Ընդառաջելով գաղթել ցանկացող քրդական ցեղերի ցանկությանը՝ նա կազմակերպեց զանգվածային մի մեծ ներհոսք դեպի Երզնկայի ու Դերջանի գավառները։ Խոսելով Դերջանում քրդերի հայտնվելու մասին, որն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 18-րդ դարի ընթացքում, հայ հեղինակները վկայում են, որ «Քուրդք բնակեալք ի սմա (Դերջան – Ա.Մ.), եկեալ ասին ի սկնմանապատայ»¹⁷։ Նույն ժամանակ ներհոսք տեղի ունեցավ Բասենի և Ալաշկերտի գավառներ, որտեղ գերազանցապես հաստատվեցին Փեսյան ցեղի բազմաթիվ քրդեր։

Վերոհիշյալ էթնիկական գործընթացներն ուժեղացան 18-րդ դարի կեսերին։ Եթե սկզբնական շրջանում քրդերը հյուսիս էին տեղափոխվում միայն ամառվա ամիսներին ալպիական մարգագետիններում իրենց բազմաքանակ ոչխարները արածեցնելու նպատակով, ապա այժմ նրանք անցան մշտական բնակության՝ տեղավորվելով հայկական գյուղերում։ Հայ բնակչությունը պարտավոր էր ամբողջ ձմեռ պահել ոչ միայն քրդերին, այլև նրանց բազմաքանակ անասուններին։ Քրդերին սուլթանների արտոնած այս արատավոր համակարգը հայտնի էր «ղշլաղություն» անունով։ Այս քաղաքականության հետևանքով ավելի ստվարացավ քրդերի թիվը հատկապես Բյուրակնյան (Բինգյուլի) լեռներին հարող գավառներում։

Ինչևէ, 15–18-րդ դդ. բռնի մահմեդականացման, հարկադիր արտագաղթների, թուրքերի ու քրդերի միտումնավոր բնակեցման հետևանքով Արևմտյան Հայաստանում որոշակիորեն աճեց մահմեդական բնակչության թիվը։ Մակայն մույնիսկ այդ պայմաններում Արևմտյան Հայաստանը դեռ 19-րդ դարի սկզբին շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ։ Բավական է նշել, որ այդ ժամանակ նահանգի տարածքում հաշվվում էր 978 հայկական գյուղ և 14 քաղաք, որոնցում ապրում էին ավելի քան 400 հազ. հայեր, որից գյուղական բնակչությունը կազմում էր 308 հազ., քաղաքայինը՝ 93 հազ. մարդ¹⁸։

1828–1829թթ. ռուս–թուրքական պատերազմից հետո չկամենալով մնալ օսմանյան տիրապետության տակ՝ 75 հազ. արևմտահայեր, որոնք գլխավորապես Էրզրումի նահանգի բնակիչներ էին, նախընտրեցին արտագաղթը և հաստատվեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններում: Թեև Էրզրումի նահանգից գաղթած հայերի թիվը կազմում էր մոտավորապես 9,6 հազ. ընտանիք, և նահանգի էթնիկական կազմը զգալիորեն այդ գաղթից հետո փոխվեց, սակայն այդ վարչամիավորը կրկին մնաց հայառնեց երկրամասերից մեկը: Արևմտահայ այլ գավառներից գաղթականները տեղափոխվեցին դեպի արևելք ու հարավ–արևելք և բնակություն հաստատեցին Ռուսաստանին սահմանակից գաղթի հետևանքով հայաթափված գյուղերում¹⁹:

Արևմտյան Հայաստանում հայակուլ էթնիկական գործընթացները խորացան 19–րդ դարի երկրորդ կեսին և 20–րդ դարի սկզբին: 1853–1856թթ. պատերազմից հետո ռուսների կողմից գրավված Էրզրումի նահանգի արևելյան գավառները և Կարսը նորից թուրքերին վերադարձնելու լուրը նոր արտագաղթի պատճառ դարձավ արևմտահայության համար: Բազմա–հազար էրզրումցիներ, կարսեցիներ, ալաշկերտցիներ, բայազետցիներ արտագաղթեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններ²⁰: Նրանց մի մասը հաստատվեց Թալինի գյուղերում, Սև ծովի առափնյա շրջաններում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Միայն 4 հազ. ընտանիք տեղավորվեց այժմյան Ստավրոպոլի երկրամասի տարածքում²¹: Նույն ժամանակ Կովկասից մեծ թվով լեռնականներ, հատկապես նրանց առաջ–նորդ Շամիլի հպատակեցումից հետո, անցնում են Արևմտյան Հայաստան՝ զբաղեցնելով լրված հայկական բնակավայրերը: Թուրքական կառավարության գործում ջանքերով լեռնականների (նրանք հայտնի էին լեզգիներ կամ չերքեզներ հավաքական անունով) մեծ մասը ռազմաքաղաքական նկատառումներով բնակեցվեց Ռուսաստանին սահմանակից Էրզրումի նահանգի արևելյան գավառներում, մասնավորապես Բասենում²²:

Օսմանյան կառավարության հայակուլ ձեռնարկումներն ուժեղացան 19–րդ դարի վերջին և 20–րդ դարի սկզբին: Այդ քաղաքականության հետևանքով, օրինակ, Էրզրումի նահանգի բնակչության թիվը 19–րդ դարի սկզբի համեմատությամբ մինչև առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը մոտ 380 հազարից կրճատվեց 150 հազարի, իսկ բնակավայրերի թիվը 931–ից՝ 391–ի,²³ այսինքն՝ 60 տոկոսով: Հատկա–նշական է, որ առավելապես տուժել էին նահանգի Ռուսաստանին սահմանակից գավառները՝ Բայազետը, Ալաշկերտը, Բասենը, Մպերը, Էրզրումը, որտեղ համիդեական կոտորածներն ավելի զանգվածային բնույթ էին կրել և տեղի էին ունեցել խոշոր արտագաղթեր դեպի Արևելյան Հայաստան և Անդրկովկասի այլ շրջաններ²⁴:

Այսպիսով՝ մինչև 1915թ. Հայոց մեծ եղեռնը, մի քանի հարյուր տարի անընդհատ, մերթ դանդաղ, մերթ բուռն տեմպերով էթնիկական ցեղասպանության գործընթացն Արևմտյան Հայաստանում արդեն տեղի էր ունեցել, հանգամանք, որը օբյեկտիվորեն պայմանավորում էր թուրքական տիրապետության դեմ հայ ազգային-ազատագրական պայքարի անհաջողությունները: Կարծում ենք, որ 16-19-րդ դդ. ընթացքում Արևմտահայաստանում տեղի ունեցած հայաթափման երևույթները, որոնք ամուշադրության են մատնվել հայոց գեոցիդի հարցերով զբաղվող շատ մասնագետների կողմից, նվազ կարևոր չեն իբրև ցեղասպանության դրսևորումներ Օսմանյան կայսրությունում, առավել ևս, որ Միավորված ազգերի կազմակերպության 1948թ. ընդունած բանաձևում ցեղասպանություն է համարվում ոչ միայն մեկ ազգի, կրոնական համայնքի կամ ռասայի դեմ ուղղված ֆիզիկական բնաջնջման գործողությունը, այլև հայրենիքից վտարելու, բռնությամբ ազգափոխելու, կրոնափոխելու, իր հայրենի հողում կյանքի անտանելի պայմաններ պարտադրելու ճանապարհով հեռացնելու երևույթները, այսինքն՝ այն, ինչ տեղի էր ունեցել Թուրքիայում դարեր շարունակ:

ԾԱՆՈԹԱԳՈՐԻԹՅՈՒՆՆԵՐ

1. Օսմանյան կայսրության վարչական բաժանումը մանրամասն տե՛ս. Birken A., Die Provinzen des Osmanischen Reiches, Wiesbaden, 1976:
2. Մելքոնյան Ա., Զավախք. պատմության ուրվագծեր, Ե., 1999, էջ 13-14, Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը, գիրք 2 (վրացերեն), Թբիլիսի, 1941:
3. Հակոբ Կարնեցի, Շինուած Կարնոյ քաղաքին, («Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ.2, Եր. 1956, էջ 550-551:
4. Miroglu I. XVI. Yuzylda Bayburt Sancağı, Istanbul, 1975.
5. Koch K., Wanderungen im Oriente wahrend der Jahre 1843 und 1846, Weimar, 1846. Տաշյան-Ռ. Հայ բնակչությունը Սև ծովէն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 3-20:
6. «Մանր ժամանակագրություններ», հ.2, էջ 565:
7. Նույն տեղում, էջ 554:
8. Ինժիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 93:
9. «Մանր ժամանակագրություններ», հ.2, էջ 567:
10. Ատրպետ, ճորոխի ավազանը, Ե., 1934, էջ 110:
11. Սատեմադարան, ծեռ. թիվ 6332, էջ 552:
12. Աբրահամ Կրետացի, Պատմություն, Ե. 1973, էջ 67:
13. «Չլորի էյալեթի քարա դավթարը», Թբիլիսի, 1979 (վրացերեն):

14. Ինժիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 123: Այն տեսակետը, ըստ որի տաճիկների՝ թուրքերի զգալի մասը նախապես եղել են ոչ միայն վրացիներ, այլ նաև հայեր, պաշտպանում է պրոֆ. Պ.Հակոբյանը. «Ախլցխայի... հին գիւղերում ապրում էին նաև թուրք ընտանիքներ, - գրում է նա, - որոնք ամենայն հաւանականութեամբ, երբեմնի հայեր էին եւ բռնությամբ հաւատափոխ էին դարձել երկրամասի իսլամացման շրջանում» (Հակոբյան Պ., նշվ. աշխ., էջ 88): Նույն կարծիքին է նաև արևելագետ Ավ.Փափազյանը (Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999, էջ 27):
15. Այդ ժամանակաշրջանում Ջավախքի երեք լիվաներում (Ախալքալաք, Խերթվիս և Չլդր) հիշատակվող գյուղերի անունները տե՛ս. Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը, գիրք 2 (վրացերեն), էջ 7-21, 332-386, 393-402. Չլդրի էյալեթի ջաքա դավթարը, Թբիլիսի, 1979 (վրացերեն), էջ 106-199.
16. Троттер Мало-Азийские курды, Известия Кавказского отдела, т. VII, Тифлис, 1873, с.1-3.
17. Ինժիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 97:
18. Մելքոնյան Ա., երգրում. Երգրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դ. առաջին երեսնամյակին, Եր.1994, էջ 115-117:
19. Եփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 492, Smith E., Researches of the rev. E. Smith and rev. H.G.O. Dwigth in Armenia, vol. 2, Boston, 1833, p.306.
20. Акты Кавказской археографической комиссии, т. X I I, Тифлис, 1904, с.313.
21. Նույն տեղում, էջ 1389
22. Մատենադարան, Ջամազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 13 1, 2,3, 4:
23. Մելքոնյան Ա., երգրում..., էջ 113-117, 158 և Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Եր., 1912, էջ 226:
24. Մատենադարան, Մկրտիչ Խրիմյանի արխիվ, թղթ. 101, վ.1, 137, 248, թղթ. 102, վավ. 639, թղթ. 103, վավ. 429:

ՎԱՅԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԽԱՉԱԿՐԱՑ
ՇԱՐԺՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԶ**

Խաչակրաց շարժման ակունքները վերլուծելիս հետազոտողները նախ և առաջ ձեռնամուխ են լինում Արևմուտքում ստեղծված տնտեսական, քաղաքական, կրոնական իրավիճակի ուսումնասիրությանը՝ պայմանավորելով խաչակրաց արշավանքների առաջացումը միայն Արևմուտքում տեղի ունեցած իրադարձություններով։ Միջնադարյան պատմության մեջ խաչակրաց արշավանքները թերևս միակ պատմական իրադարձությունն են, որոնք ընթացան տարբեր քաղաքակրթությունների բախման և առնչությունների տեսքով։ Միայն արևմտաքրիստոնեական քաղաքակրթության շրջանակներում նշված բախման վերլուծությունը խիստ պարզունակ է դարձնում այնպիսի համընդհանուր պատմական պրոցեսի դիտարկումը, որն ընդգրկել է միջնադարյան աշխարհի հսկայական մասը, մասնավորապես՝ Եվրոպան, Մերձավոր և Միջին Արևելքը և Աֆրիկան։ Պատմական իրական ռեկոնստրուկցիայի տեսակետից անհրաժեշտ է նախ և առաջ անդրադառնալ խաչակրաց շարժման նախօրեին Մերձավոր Արևելքում ստեղծված աշխարհաքաղաքական գլոբալ փոփոխություններին, որոնց հակազդելու ձգտումը հնարավոր դարձրեց արևմտյան և արևելյան քրիստոնյաների քաղաքական շահերի համատեղումը։ Այս առումով, որքան էլ տարբեր լինեին այդ հակազդման գիտակցումները, թե՛ պապականությունը և թե՛ Բյուզանդիան պետք է Արևելք շարժվեին անհավատների լծից քրիստոնյաների, քրիստոնյա աշխարհի (Christendom) սրբավայրերի ազատագրման քաղաքակրթական ունիվերսալ գաղափարներով։

Նշված հոդվածի շրջանակներում մենք կփորձենք ներկայացնել թուրքական գործոնի ազդեցությունը այս գաղափարների, արևմտյան և արևելյան քրիստոնյաների դաշինքի առաջացման գործում, ինչպես նաև

Վահե Գևորգյանը ԵՊՊ արևելագիտության ֆակուլտետի շրջանավարտ է, ՀՀ ԱԳՆ աշխատակից։

կվերլուծենք խաչակրաց առաջին արշավանքի հետևանքները Մերձավոր Արևելքում թուրքական տարրի հետագա գոյատևման առումով:

Արևելքում տեղի ունեցող իրադարձություններին միջամտելու առաջին պապական կոչը թվարկվում է 1074թ. Մանագլերտի ճակատամարտից երեք տարի հետո, երբ սելջուկ թուրքերը ձեռնամուխ էին եղել Փոքր Ասիայի նվաճմանը: Գրիգորիոս VII պապի «հավատը պաշտպանել ձգտող քրիստոնյաներին» ուղղված նշված կոչին մախորդել էր մեկ տարի առաջ 1054թ. սխիզմայից հետո պապականության և Բյուզանդիայի հարաբերությունների վերականգնումը, և Կոստանդնուպոլսում պապական լեզատ, Վենետիկի եպիսկոպոս Դոմինիկոսի բանակցությունները: Կոստանդնուպոլսում ծավալված բանակցությունների մանրամասնությունները մեզ հայտնի չեն, սակայն պապի նշված կոչը, ինչպես մաև այլ մամակները մեզ որոշակիորեն հաղորդակից են դարձնում բանակցությունների արդյունքներին: Արդեն հիշատակված կոչում պապը սելջուկյան ներխուժման մասին գրում է. «Հեթանոս ժողովուրդը, քրիստոնյաների կայսրության դեմ անսպասելիորեն հզորանալով, խղճալի դաժանությամբ հասել է մինչև Կոստանդնուպոլսի պարիսպներ, ճանապարհին բոլոր քաղաքները ոչնչացրել և դաժան բռնապետություն է հաստատել այնպես, որ բազմահազար քրիստոնեական հոտը ոչխարի նման մորթվել է»¹:

Այս կոչում առաջին անգամ շոշափվում է ծովից այն կողմ ապրող քրիստոնյաներին ռազմական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, նշվելով, որ հանուն Քրիստոսի Աստծո որդիները մահացու վտանգի պահին պետք է համախմբվեն և ինչպես Փրկիչն է «մեզ համար իր կյանքը տվել, այնպես էլ մենք մեր եղբայրների փրկության համար մեր կյանքը պետք է տանք»²:

Հովհաննեսի առաջին ուղերձի այս տողերը մենք հանդիպում ենք այս առնչությամբ գրված Գրիգորիոսի բոլոր մամակներում: Այլ, մասնավորապես, լեռնականներին ուղղված կոչում Գրիգորիոս VII-ը նշում է, որ հեթանոսների դեմ արշավանքը գլխավորելու է անձամբ ինքը՝ որպես Սուրբ Պետրոսի փոխանորդ և քրիստոնեական աշխարհի մեծագույն առաջնորդ: Հատկանշական է, որ հավատացյալ ժողովրդին ուղղված իր դիմումներում և կոչերում պապը համարյա չի շեշտում անդրծովյան քրիստոնյաների կրոնական մոլորությունները և եկեղեցիների միասնության անհրաժեշտությունը: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ արևելյան քրիստոնյաները մի անբաժան մասն են քրիստոնեական այն աշխարհի, որի գլուխը Սուրբ Պետրոսի փոխանորդներն են: Եվրոպական տարբեր տիրակալներին ուղղված մամակներում թեև կրատական նկրտումներով առաջնորդվող պապն ուղղակի պահանջում է կատարել իրենց վասալական պարտականությունները և հռոմեական եկեղեցու պաշտպանության

համար զորքեր հատկացնել այն հավաստմամբ, որ «գինվորական բազմաքանակությունը, որ հոգում ենք հավաքելու, քրիստոնեական արյան հեղման համար չէ»³:

Միայն գերմանական Հենրիխ IV-ին կայսեր հասցեագրված նամակում պապը մանրամասնորեն պարզաբանում է ապագա սրբազան պատերազմի բոլոր ասպեկտները՝ վերլուծելով պատերազմի ոչ միայն գաղափարական, այլև քաղաքական նպատակները: Նամակում արևելյան արշավանքի հիմնական նպատակն է հռչակվում Արևելքում քրիստոնեական հավատի պահպանությունը: Միևնույն ժամանակ պապին առանձնապես ոգևորում է այն հանգամանքը, որ առաքելական աթոռի հետ կրոնական տարաձայնություններ ունեցող անդրծովյան քրիստոնյաները, մասնավորապես՝ հույներն ու հայերը, համաձայնություն են որոնում Հռոմի հետ: Նամակում առաջին անգամ արևելյան քրիստոնյաներին օգնության շրջանակներում շոշափվում է Մուրբ վայրերի ազատագրման հարցը⁴:

Հետագայում կապված Երուսաղեմ ուխտագնացության դժվարությունների, ինչպես նաև Տիրոջ Գերեզմանն ազատագրելու նշանաբանի ժողովրդակայնության հետ, այս խնդիրը զգալի տեղ գրավեց խաչակրաց շարժման գաղափարախոսության մեջ:

Քաղաքական տարբեր հանգամանքների բերումով Գրիգորիոս VII-ի արևելյան արշավանքը չկայացավ, շուտով ինքը՝ պապը, օրհնեց իտալական նորմանների արշավանքը Բյուզանդիայի դեմ, սակայն Արևելքում հաստատված անհավատների դեմ սրբազան պատերազմի նրա գաղափարները իրենց շարունակական զարգացումը ստացան նրա հաջորդների քահանայապետության օրոք: 1095թ. տեղի ունեցած Կլերմոնի եկեղեցական ժողովում Ուրբանոս II պապի արտասանած ճառն այս առումով խիստ հետաքրքարական է, քանի որ հնարավորություն է ընձեռում որոշակիորեն ուսումնասիրել խաչակրաց շարժման գաղափարախոսությունը: Կլերմոնի ճառը մեզ է հասել հինգ տարբեր պատմիչների խմբագրություններով⁵: Անկասկած, դրա մեջ կատարվել են որոշակի սրբագրումներ կապված խաչակրաց արշավանքի հետագա զարգացումների հետ, մասնավորապես, եթե իրադարձությանը ժամանակակից պատմիչների մոտ (Ֆուլբեր Շարտրացի, Ռոբերտ վանական, Բաուդրի Դուլացի), քրիստոնյան աշխարհի հիմնական թշնամին թուրքերն են, ապա հետագա դարաշրջանի պատմիչների մոտ մենք հանդիպում ենք նաև սարակինոսներին (Հվիբերտ Նոժանացի, Վիլյամ Մալմեգրուրցի)⁶: Նշված հանգամանքը թեև որոշակի դժվարություններ է ստեղծում պատմական ճշգրտության վերականգնման տեսակետից, այնուամենայնիվ, ավելի լիարժեք և կենդանի է արտահայտում իրադարձությունների հասարակական գիտակցումը: Այսպես՝ Կլերմոնի ժողովից երեսուն տարի հետո

Վիլյամ Մալմեգրուորցին երկասիրությամբ մեզ ներկայացվող պապական խոսքը ներառում է աշխարհաքաղաքական ուշագրավ վերլուծություններ: Պապը, հավատացյալների առջև բացելով աշխարհի բոլոր երեք մասերը՝ Եվրոպա, Ասիա և Աֆրիկա, շեշտում է, որ այս մայրցամաքներից քրիստոնեությունը ամենաքիչը տարածված է Եվրոպայում, քանի որ դժվար է քրիստոնյաներ ճանաչել մայրցամաքի հյուսիսում ապրող ժողովուրդներին իրենց վայրենի և հիմար վարքի պատճառով: Աստծո խոսքի և քրիստոնեության տարածման հիմնական բնօրրանը հանդիսացող Ասիան և Աֆրիկան շատ ավելի բազմաքանակ են ոչ միայն իրենց տված առաքյալներով և սրբերով, այլև քրիստոնյա բնակչությամբ նաև ներկայումս. «Ինչպիսին պետք է լինի քրիստոնյաների ամօթը, քանի որ Աստծո թշնամիները նվաճել են Ասորիքը, Հայաստանը և ողջ Փոքր Ասիան իր բոլոր նահանգներով (թվարկվում են բոլոր նահանգները, այդ թվում՝ Կիլիկիան)»⁷:

Իրադարձությունների ժամանակակից պատմիչներն ավելի հուզալի երանգներով են պատկերում պապի՝ խոսքերը, հատկապես, երբ դրանք վերաբերվում են անդրծովյան եղբայրներին օգնելու անհրաժեշտության հիմնավորմանը: Ըստ պապի՝ քրիստոնեական եղբայրությունը վերացական հասկացություն չէ, քանի որ «քրիստոնյայի թափվող արյունը՝ Փրկիչ Քրիստոսի արյունն է, հանցավոր չարչարանքներին և դաժան ստրկությանը մատնված քրիստոնյայի մարմինը՝ Քրիստոսի մարմնին արյունակից»⁸:

Հավատակիցների դժբախտության հիմնական պատճառը նույնպես հայտնի է. «Չնչին մարդիկ են զավթել մեր քաղաքները (վերևում նշվում է Երուսաղեմի, Անտիոքի և այլ արևելյան քաղաքների անունները)՝ գաբշելի և կեղտոտ թուրքերն են իշխում մեր եղբայրներին»⁹:

Խաչակրաց առաջին արշավանքի ընթացքում սելջուկների դեմ ուղղված թե՛ հույների և հայերի, թե՛ խաչակիրների գործողությունները միտված էին ոչ միայն հնարավորին չափ տարածքների ազատագրմանը, այլև այդ տարածքներում հիմնավորված թյուրքական տարրի հեռացմանը: 1098թ. Անտիոքի նվաճումից հետո պապին հասցեագրված նամակում խաչակրաց բանակի առաջնորդները իրենց ռազմական հաջողությունների թվարկման շարքում առանձնահատուկ են անդրադառնում «թուրքերի» և հեթանոսների ոչնչացմանը¹⁰: Աննա Կոմնենեն նույնպես համաձայնորեն է անդրադառնում Արևմտյան Անատոլիայից սելջուկներին տարբեր միջոցներով, այդ թվում դրամական պարգևներով «հայրենիք վտարելու» բյուզանդացիների ջանքերին¹¹: Կիլիկիայի քաղաքներում «անհավատների աղոթքի «Ալլահուաքբար» ճիչը լոնցնելու և փոխարենը՝ «Քրիստոսը հաղթել է, թագավորում և կառավարում է» նշանաբանը վերադարձնելու» նպատակով Դաշտային Կիլիկիայում խալական նորմանների առաջնորդներից մեկին՝ Տանկրեդին դիմած հայոց իշխան Օշինի համապատասխան

կոչում, որը տեղ է գտել Ռաուլ Կաենացու ժամանակագրության մեջ, լուսաբանվում է լեռներից դաշտավայր իջած հայերի տարերային գործողությունները բյուրքական բնակչությանը այս տարածաշրջանից դուրս մղելու ուղղությամբ¹²:

Չնայած արևմտյան հավատակիցների կողքին հույների և հայերի կրոնական պատերազմին մասնակցությանը՝ հարկ է նշել, որ արևելյան քրիստոնյաների համար պատերազմը չուներ այն քաղաքակրթական համապարփակ բնույթը և նշանակությունը, որոնց գիտակցումը դեռևս ազգային պետությունների չբաժանված Եվրոպայի զանազան ժողովուրդներին համաքրիստոնեական նշանաբանների ներքո բերել էր Արևելք: Թե՛ հույների և թե՛ հայերի գործողությունները թելադրված էին իրական քաղաքական շահերով: Համանման քաղաքական նպատակներ չհետապնդող Արևելքի մյուս քրիստոնյա ժողովուրդները, մասնավորապես՝ ասորիները, չնայած քրիստոնյա եղբայրներին երբեմն ցուցաբերող համակրանքին, չմասնակցեցին պատերազմին: Հայերի և հույների քաղաքական նպատակներն այնքանով էին իրական և կոնկրետ, որ պայմանավորված էին պետական կամ ազգային գոյատևման անհրաժեշտությամբ, ունեին իրենց հստակ թիրախը և աշխարհագրական սահմանները, որոնք, իհարկե, Երուսաղեմ չէին հասնում: Այդ էր պատճառը, որ բյուզանդական մասնակցությունը դուրս չեկավ Անատոլիայի սահմաններից, իսկ Պաղեստինի հայ բնակչությունը չներգավիճեց կրոնական պատերազմի մեջ: Դեռ ավելին՝ Աննա Կոմենենն «Ալեքսիականում» Եգիպտոսի հայազգի վեզիր Ալ Աֆդալի կողմից խաչակիրների ձեռքից Երուսաղեմի հետ նվաճման համար հավաքագրված բանակի կազմում հայկական զորամիավորումները թվարկվում են առաջին շարքում¹³:

Սկզբնական շրջանում Արևելքում խաչակրաց արշավանքի կրոնական ենթատեքստի գիտակցումը ոչ միայն քրիստոնյա հայերի ու հույների, այլև մահմեդական արաբների համար հակվում էր զուտ սելջուկների դեմ պատերազմին: Դա է՝ վկայում, ինչպես խաչակիրների հետ դաշնակցելու Ֆաթիմյան խալիֆայության փորձերը, այնպես էլ Ասորիքի արաբական իշխանությունների ընդհանուր առմամբ պահպանվող բարյացակամ չեզոքությունը: Մերձավոր Արևելքի բնիկ ժողովուրդների աչքերում Արևմուտքից հայտնված բանակը բյուզանդական ավանդույթների կրողն էր և տարածաշրջան էր եկել կայսրության սահմանները վերականգնելու և եկվոր թուրքերին քշելու նպատակով: Անտիքի գրավումից, ինչպես նաև քաղաքին օգնության եկած Ասորիքի սելջուկյան իշխանությունների զորքերի ջախջախումը ստեղծում էր Մերձավոր Արևելքում Ֆաթիմյանների դիրքերի վերականգնման հնարավորություն, որը վեզիր Ալ Աֆդալի հնտորեն օգտագործեց խաչակիրների ժամանումից առաջ՝ սելջուկներից

խելով Պաղեստինը: Խաչակիրները պարզորոշ կերպով գիտակցում էին այս իրողությունը և իրենց գործողություններով, մասնավորապես՝ Ֆաթիմյանների հետ պատվիրակությունների փոխանակմամբ փորձում էին եթե ոչ դաշնակցելու, ապա պահպանելու վերջիններիս թշնամությունը սելջուկների հանդեպ: Ըստ Իբն Ալ-Ասիրի՝ Դամասկոսի սուլթանին գրած նամակում նրանք Արևելքում իրենց գործողությունների միակ նպատակը համարում էին հունական կայսրությանը պատկանող հողերի ազատագրումը¹⁴: Միայն 1099թ. Ֆաթիմյանների ձեռքից Երուսաղեմի նվաճումը, որն ուղեկցվեց հրեա և մահմեդական բնակչության զանգվածային կոտորածով, վերջնականորեն բացահայտեց խաչակրաց արշավանքի կրոնական բնույթը:

Խաչակրաց առաջին արշավանքը ծանր հարված հասցրեց Մերձավոր Արևելքում հաստատված սելջուկներին: Ընչտ է, այն տեղի ունեցավ սելջուկների հսկայածավալ տերության արդեն իսկ մասնատման պայմաններում, այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք սելջուկյան տերությունների մարտունակությունը, արագ կտալիցիաներ կազմելու ունակությունը, հարկ է նշել, որ խաչակրաց արշավանքը կայացավ արդեն իսկ նվաճված տարածքների թուրքական տարրի ամրապնդման ժամանակ: Այդ տեսակետից սելջուկյան պարտությունն առավել քան ծանր էր: Խաչակիրների, բյուզանդացիների և հայերի համատեղ գործողությունների շնորհիվ սելջուկներն ամբողջովին դուրս մղվեցին Մերձավոր Արևելքի ծովափնյա բոլոր շրջաններից, ինչը կանխորոշեց նրանց երկրորդական դերը Արևելք-Արևմուտք փոխանակումներում: Սելջուկներն ամբողջովին դուրս մղվեցին Պաղեստինից, Լիբանանից, ինչպես նաև տնտեսական և ռազմավարական տեսակետից Ասորիքի ամենակարևոր հատվածներից: Բյուզանդիային հաջողվեց ազատագրված Արևմտյան Անատոլիայում ամրոցների խիտ շարքով ստեղծել ուժեղ պլացդարմ, որը ցամաքային ճանապարհով կապվեց թերակղզու հյուսիսային և հարավային առափնյա շրջաններին: Այս համգամանքը շուրջ մեկ դար պայմանավորեց կայսրության ակտիվ ռազմական և դիվանագիտական ներգրավումը Անատոլիայում տեղի ունեցող զարգացումներում: Դաշտային Կիլիկիայում Ռումի սուլթանության տիրապետության վերացումը խիստ արժևորեց Լեոնային Կիլիկիայում հայկական իշխանությունների դերակատարումը միջազգային հարաբերություններում, քանի որ նախկինում սելջուկյան տիրապետությունների միջև սեղմված Ռուբինյանները և Հեթումյանները դարձան Ռումի սուլթանության հիման վրա ձևավորված Իկոնիայի սելջուկների ներխուժումներից Դաշտային Կիլիկիայի քրիստոնեական բնակչության միակ բնական պաշտպանները իրենց պաշտպանության ներքո գտնվող տարածքների հանդեպ միանգամայն արդարացված հավակնություններով:

Խաչակրաց առաջին արշավանքի, ինչպես նաև 1091թ. անհաջող կամպանիայի ընթացքում խաչակիրները և հույները ազատագրեցին կամ ոչնչացրեցին սելջուկների հիմնական քաղաքներն ու հենակետերը, այդ թվում՝ Նիկիան, Ջմյուռնիան, Անտիոքը, Անկյուրան և Իկոնիան: Այնուամենայնիվ, այս ծանր հարվածը Անատոլիայում թուրքական տարրի համար մահացու չեղավ: Բյուզանդական կայսեր և խաչակիրների 1091թ. արշավանքը դաշնակիցների միջև տարածայնությունների պատճառով աղետալի ավարտ ունեցավ: Չախողվեց նաև Կապադովկիայի կենտրոնը Անտիոքի իշխանությանը միավորելու Բոհեմունդի և հայերի ջանքերը: Արդյունքում՝ սելջուկներին հաջողվեց ուշքի գալ ծանր պարտությունից և պահպանել իրենց ներկայությունը Անատոլիայի կենտրոնական և արևելյան շրջաններում: Անկասկած, այս երևույթը պայմանավորված չէր միայն քրիստոնյաների նշված անհաջողություններով, այն հենվում էր աշխարհատնտեսական միանգամայն իրական իրողությունների վրա: Անատոլիայի կենտրոնական տափաստանային հատվածը՝ անտիկ Փոյոդիան, որ նոսր էր բնակեցված դեռևս բյուզանդական շրջանում, բյուզանդական ենթակառուցվածքների ոչնչացմամբ ընթացող թուրքական շուրջ 25-ամյա տիրապետության հետևանքով Գրուսսեի բնորոշմամբ վերածվել էր «կիրգիզական ստեպի»¹⁵: Արդյունքում՝ այդ տարածաշրջանը տնտեսական առումով կարող էր բավարարել միայն քոչվոր թուրքերին՝ տնտեսական հետաքրքրություն չներկայացնելով ո՛չ խաչակիրների և ո՛չ էլ մուսլիսկ բյուզանդացիների համար:

Այսպիսով՝ թուրքական գործոնը խաչակրաց շարժման ձևավորման մեջ հանդես եկավ մի քանի հարթություններում: Ազգային պետությունների դեռևս չտարաբաժանված, «քրիստոնյա աշխարհի մեծագույն առաջնորդի»՝ Հռոմի պապի հոգևոր իշխանության ներքո գտնվող միացյալ Եվրոպան, ի դեմս քրիստոնյա աշխարհի (ըստ այդ ժամանակահատվածի եվրոպական պատկերացումների քրիստոնյայի հայրենիքը քրիստոնյա աշխարհն էր – Christendomus) արևելյան հատվածը տիրացած թուրք-սելջուկների, ճանաչեց իր քաղաքակրթական թշնամիներին: Արևելյան քրիստոնյաների քաղաքական շահերը միանգամայն իրական բովանդակություն հաղորդեցին այս հասկացողությանը՝ ապահովելով արևմտյան և արևելյան քրիստոնյաների շահերի համատեղումը, որի արդյունքը հանդիսացավ խաչակրաց առաջին արշավանքը:

1. Monumenta Germaniae Historiae, Register Gregors VII, I. 49, Berlin, 1955, p. 75
MGH, Register Gregors VII, I. 49, p. 75.
2. Ibid. 75
3. MGH, Register Gregors VII, I. 49, p. 70.
4. MGH, Register Gregors, 37, p. 173.
5. J.P. Migne, Urbani II Pontificus Romani epistolae, Paris, 1853, pp. 566—580.
6. Ibid.
7. J.P. Migne, Urbani II Pontificus Romani epistolae, p. 572.
8. Ibid. p. 566.
9. J.P. Migne, Urbani II Pontificus Romani epistolae, p. 576.
10. Ibid p. 567.
11. Анна Комнин, Алексиада, М., 1965, с. 275.
12. Kamel— Altevarykh par Ibn Alatyr, Recueil Historiens des Croisades, Historiens
Orientaux, Paris, 1872, p. 191.
13. Анна Комнин, Алексиада, с. 376.
14. Historia de Hierosolymitano itinere, Recueil des Historiens des Croisades,
Historiens Occidentaux, Paris 1846, p. 28.
15. Rene Grousset, Histoire des Croisade et du Royaume Franc de Jerusalem, Paris,
1934, Introduction, p. XXXIX.

**«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԹՈՒՐԶԻԱՅՈՒՄ
ԺՈՂՈՎՐԴԱՅԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ԹՈՒՐԶԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1930 – 1948 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Մինչև Թուրքիայի Հանրապետության կազմավորումը, երբ 1923թ. հունվարի 6-ին Մուսթաֆա Զեմալ Աթաթյուրքն արդեն գոյություն ունեցող մի շարք ընկերությունների հիմքի վրա հրապարակեց Ժողովրդական կուսակցության (ԺԿ) ստեղծման մասին հռչակագիր, այնուհետև ապրիլի 8-ին հրապարակվեցին կուսակցության նախնական ծրագրային դրույթներ համարվող «Ինը սկզբունքները»¹: Խոսելով ԺԿ-ի առաքելության մասին՝ Զեմալը նշում էր, որ Ժողովրդական կուսակցությունը պարտավորվում է ստանձնել Թուրքիան ժամանակակից աշխարհի մեջ մտցնելու և այնտեղ նրա վերելքն ապահովելու գործունեությունը²: 1924 թվականից Ժողովրդական կուսակցությունը վերանվանվում է Ժողովրդահանրապետական կուսակցություն (ԺՀԿ): Կուսակցության կարևոր նպատակներից էր կազմավորել կուսակցական կառույցները և ապարատը, կենտրոնացնել պետական և կուսակցական իշխանությունը, մշակել գաղափարախոսությունը, հաստատել կուսակցության գերակայությունը պետական քաղաքականության մեջ և խստացնել միակուսակցական վարչակարգը:

Թուրքիայի Հանրապետության և ԺՀԿ-ի կազմավորման ընթացքում Մուսթաֆա Զեմալի նախաձեռնությամբ ստեղծվեց «Թուրքական պատմական հանձնախումբ», որի նպատակն էր լուսաբանել Օսմանյան կայսրության պատմությունը: Սակայն այդ հանձնախմբի անարդյունավետ գործունեության հետևանքով ձևավորվեց մի նոր կազմակերպություն՝ «Թուրքական պատմական ընկերությունը», որի միջոցով փորձ էր արվում հանրությանը ներկայացնել թուրքական պատմության նոր հայեցակարգը:

Թուրքական իշխանությունների այս քայլը նպատակ էր հետապնդում երկրի ներսում և նրա սահմաններից դուրս ներկայացնել պատմական նոր «ուսումնասիրություններ», որոնց միջոցով կարող է ձևավորվել հասա-

* Աշոտ Սողոմոնյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դասախոս է, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հետազոտող:

րակական մի նոր կարծիք: Այսինքն՝ Թուրքիան, դեռևս այն ժամանակներից գիտակցելով, թե իրեն ինչպիսի ժառանգություն է բաժին հասել Օսմանյան ժամանակաշրջանից, փորձում է պաշտոնապես միջամտել և նորովի ներկայացնել պատմությունը և իրականությունը:

Թուրքական պատմական ընկերությունը ստեղծվել է Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի անմիջական նախաձեռնությամբ: 1930 թվականի ապրիլի 23-ին «Թուրքական օջախների» 6-րդ համագումարը դրեց Թուրքական պատմական ընկերության հիմնաքարը: Թուրքական պատմական ընկերության կազմավորմամբ «Թուրքական օջախների» կանոնադրության մեջ նշվում է. «Թուրքական օջախը Թուրքիայի պատմությունն ուսումնասիրող հանձնախումբ է»: Հանձնախումբը բաղկացած էր 16 անդամից, և նրա առաջին հավաքը տեղի է ունեցել 1930 թվականի հունիսի 4-ին թուրք օջախների կենտրոնական մասնաշենքում, որտեղ նախագահ Համդուլահ Սուլայիի գլխավորությամբ ընտրվում է ղեկավար մարմինը՝ հետևյալ կազմով՝ նախագահ՝ Հանրապետության նախագահի գլխավոր քարտուղար Մեհմեդ Թևֆիք (Բըլքըլըօղլու), փոխնախագահ՝ Իրավաբանական ֆակուլտետի քաղաքական պատմության պրոֆեսոր և Ստամբուլի պատգամավոր Յուսուֆ Աքչուրա, փոխնախագահ՝ Չամաքքալեի պատգամավոր Սամիհ Ռիֆաթ, գլխավոր քարտուղար՝ Այդընի պատգամավոր, դոկտոր Ռեշիթ Գալիփ³:

1931թ-ին փակվում են «Թուրքական օջախները», և վերոհիշյալ թուրք պատմության ուսումնասիրման հանձնախումբը այլևս չէր գործում: Լեզվական բարեփոխումներից հետո կազմակերպությունը 1935-ին Աթաթյուրքի կողմից վերանվանվում է «Թուրքական պատմական ընկերություն»:

Նախարարների խորհրդի 21.X.1940թ-ի 2/ 14556 համարի հրամանում (ընդհանուրի) հանրության օգտին ծառայող օրենքներում Թուրքական պատմական ընկերության վերաբերյալ ասվում է հետևյալը. «Թուրքական պատմության ուսումնասիրությունները և ստացված արդյունքները հրատարակելու նպատակով ստեղծված է Թուրքական պատմական ընկերությունը, որի գիտական աշխատությունները արժանացել են աշխարհի գիտական հանրության հավանությանը: Կազմակերպությունների մասին օրենքի 37-րդ կետի համաձայն՝ համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների վերաբերյալ Պետական երկրորդ հիմնարկության և համընդհանուր կազմակերպության կողմից 25.07.1940թ, 12. 09.1940թ թիվ 2471/ 2522, 300/3003 որոշման հիման վրա ներկայացված արձանագրությունը վերոնշյալ կազմակերպության վերաբերյալ 21.10.1940թ-ին արժանանում է նախարարների խորհրդի համաձայնությանը»⁴:

1932թ. փետրվարի 14-ին Աթաթյուրքը կազմակերպեց դասընթաց պատմության ուսուցիչներին նոր պատմության տեսակետին ծանոթաց-

ներու նպատակով: Այդ դասընթացը պետք է կոչվեր «Պատմության ուսուցիչների դասընթաց», սակայն առաջին հավաքույթից հետո այն կոչվեց «Թուրքական պատմական առաջին կոնգրես» և բոլոր արձանագրությունները հրատարակվեցին այս անվանումով:

Կոնգրեսը կազմակերպվել էր Ազգային կրթության նախարարության հետ համատեղ, որին հրավիրված էին Ստամբուլի համալսարանի պատմագիտության պրոֆեսորներ, ինչպես նաև ուսումնարանների և միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչներ: Կոնգրեսին մասնակցում էին 232 անդամ, որոնցից 25-ը՝ թուրքական պատմական ընկերության անդամներ, 10-ը՝ համալսարանի ներկայացուցիչներ, 1-ը գեղեցիկ արվեստների ակադեմիայի անդամ, 198-ը՝ ուսումնարանների և միջնակարգ դպրոցների ուսուցիչներ: Կոնգրեսի նախագահությունը կազմվեց հետևյալ կարգով. նախագահ՝ Ազգային կրթության նախարար Էսաթ-բեյ, փոխնախագահ՝ թուրքական պատմական ընկերության նախագահ և Անկարայի իրավագիտության ֆակուլտետի քաղաքական պատմության պրոֆեսոր Յուսուֆ Աբչուրա-բեյ, Ազգային կրթության նախարարության կրթության և դաստիարակության վարչության պետ՝ Իլհամ (Մանգա)-բեյ⁵:

Կոնգրեսը բացվեց 1932թ. հուլիսի 2-ին Անկարայի ժողովրդական տան թատրոնի սրահում Ազգային կրթության նախարար Էսաթ-բեյի կողմից: Կոնգրեսի բոլոր նիստերին ուշադիր հետևում և հանձնարարություններ էր տալիս Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը:

Թուրքական պատմական առաջին կոնգրեսին մասնակցում էին միայն թուրք պրոֆեսորներ և ուսուցիչներ: Միջազգային որևէ ներկայացուցիչ կոնգրեսին չէր մասնակցում⁶:

Կոնգրեսի առաջին օրը օրակարգում կարևոր քննարկման առարկա էր հանդիսանում թուրքական պատմական ընկերության անդամ տիկին Աֆեթի «Պատմությունից առաջ և Պատմության լույսի ներքո» վերտառությանը գեկուցումը: Երկրորդ օրը քննարկման էր ներկայացվել Թուրքական պատմական ընկերության քարտուղար, դոկտոր Ռեշիթ Գալիփի «Հայացք թուրքական ցեղի և մշակույթի պատմությանը» վերտառությանը գեկուցումը: Երրորդ օրը Ստամբուլի համալսարանի մարդաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ Շևքեթ Ազիզի «Թուրքերի մարդաբանությունը» գեկուցումը: Վեցերորդ օրը թուրքական պատմական ուսումնասիրության ընկերություն նախագահ Յուսուֆ Աբչուրա Օղլուի առաջարկությամբ քննարկվել է «Պատմությունը գրելու և պատմությունը պարտադրել կարդալու մանրամասներին վերաբերող» գիտաժողով կազմակերպելու հարցեր:

1932թ. փետրվարի 14-ին Աթաթյուրքի հրամաններում թուրքական պատմության առաջին կոնգրեսից բացի տեղ է գտել ևս 3 խնդիր.

1. «Թուրքիայի պատմության գլխավոր հիշողությունները» գիրքը վերջին ուսումնասիրությունների և փաստերի հիման վրա կրկին գրի առնել,

2. ուսումնասիրությունների համար պատրաստված 4 հատոր պատմության գրքերում անհրաժեշտ ուղղումներ կատարելուց հետո նոր հրատարակության հանձնել 1932–1933 ուսումնական տարվա համար,

3. նախակրթարանների համար պատրաստել նոր պատմության դասագրքեր:

Աթաթյուրքը ցանկանում էր, որ «Թուրքական պատմության գլխավոր հիշողությունները» գիրքը պատրաստ լինի մինչև 1932թ. աշնանը: 1932թ. հուլիսի 13–ից մինչև հոկտեմբերի 17–ը Անկարայում և Ստամբուլում տեղի ունեցած մտաշրջանների ընթացքում կայացվեց վերջնական որոշում, թե ովքեր պետք է գրեն աշխատությունները և այն երբ պետք է պատրաստ լինի: Ըստ այդմ, որոշվեց «պատմության» բաժինը հանձնարարել Թուրքական պատմական ընկերության անդամներին, իսկ «մշակույթի» բաժինը՝ առանձին մասնագետներին:

Թուրքական պատմական ընկերության նպատակների մասին նշված է նրա կանոնադրության 4–րդ և 5–րդ կետերում.

«Կետ 4–րդ. Ընկերության նպատակն է ուսումնասիրել Թուրքիայի և թուրքական պատմության, ինչպես նաև դրա հետ կապված խնդիրները և արդյունքները հրապարակել ամեն գնով: Թարգմանել և հրատարակել են թուրքերին և Թուրքիայի պատմությանը վերաբերող օտարերկրացիների կողմից հրատարակված գիտական աշխատություններ, կազմակերպել ժողովներ և գիտաժողովներ գիտական խնդիրներին առնչվող հարցերը քննարկելու նպատակով:

Կետ 5–րդ. Ընկերությունը համագործակցելու է օտարերկրյա գիտական կազմակերպությունների, ուսումնասիրման և հրատարակչական կենտրոնների հետ:»

Ընկերությունը 1937թ–ից սկսած երեք ամիսը մեկ անգամ հրատարակել է «Belleten» կոչվող ամսագիր: «Belleten» վերնագիրը, որը նշանակում է «ուսումնասիրող», Աթաթյուրքի նվերն է ընկերությանը: «Belleten»–ը և համարվում է ընկերության օրգանը:

Թուրքական պատմական 1–ին կոնգրեսից (2 հուլիսի, 1937թ.) հետո 1937թ–ի 20–25–ին Ստամբուլի Դոլմաբահչե պալատում գումարվեց թուրքական պատմական 2–րդ կոնգրեսը: Այս կոնգրեսին առաջին անգամ հրավիրվել են օտարերկրացի գիտնականներ²: Այստեղ ներկայացված բոլոր ուսումնասիրությունները Աթաթյուրքը կարդացել էր մեկ առ մեկ, այնուհետև թույլատրել էր դրանք ներկայացնել կոնգրեսում³:

Թուրքական պատմական 3–րդ կոնգրեսի աշխատանքները 2–րդ համաշխարհային պատերազմի պատճառով սկսվեցին ուշ: Այն տեղի է ունեցել 1943թ–ի նոյեմբերի 15–ից 20–ը Անկարայում:

Այդ ժամանակահատվածում կատարվել է Անատոլիայում մեծ պետության ստեղծման, խեթերի սփռման սահմանների ուսումնասիրու-

թյունը, հին Անատոլիայի մշակույթը և Միջին Ասիայի, Էգեյան ծովի ափագանի, հարավային Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի մշակույթների ուսումնասիրությունները, և վերջապես հազարավոր տարիներ ի վեր մեծ քաղաքակրթության բնակավայր հանդիսացող Անատոլիայի պատմությանը վերաբերող փաստաթղթերի հրապարակումը¹¹:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ խոսելով արաբների, պարսիկների, իրաքցիների, սելջուկների, ռուսների, չինացիների մասին թուրքական պաշտոնական պատմագրության մեջ հատկապես Անատոլիայի, վերաբերյալ հրապարակումներում որևէ ակնարկ չի արվում հայերի՝ այդ տարածքներում գոյության մասին:

Թուրքական պատմական ընկերությունը ուսումնասիրել է արաբական, իրանական, սիրիական, վրացական, հունական և հայկական աղբյուրներ՝ վկայակոչելով միայն թուրքերին վերաբերող հատվածները: Հայկական աղբյուրներից են՝ վերջին ժամանակներին վերաբերող. 1. Թանբուրի Հարութի «Թահմաս Զուլու խանի պատմությունը», 2. Գալուստ Արաբյանի «Ռուսչուք Այանը Մուսթաֆա փաշայի կյանքը և հերոսությունները» վերտառությամբ աշխատությունները: Ավելի հին շրջանի վերաբերող 1. Գենջելի Կիրակոսի «Մոնղոլական արշավանքի պատմությունը», 2. Մեզուփցի Թումայի «Թիմուրի և Շահրուհի պատերազմները Արևմտյան Ասիայում, Աքքոյունլուները և Քարաքոյունլուները», 3. Մովսես Քազանքաթուալլի «Աֆղանների պատմություն» աշխատությունները, ինչպես նաև թուրքերեն թարգմանված 1. Ուրֆայի Մաթիհենի «Պատմությունը», 2. Թամիչյանի «Մեծ ժամանակագրություն», 3. Ռահիփ Գրիգորի, 4. Անիից (Անիում բնակվող) Մամվելի, 5. Ուրֆացի Վահրամի, 6. Կիլիկիացի Ներսեսի, 7. Կիլիկիացի Սմբատի, 8. Ռահիփ Մալաքի մյան հայ պատմաբանների աշխատություններում գոյություն ունեն թուրքերին վերաբերող հատվածներ¹²:

Թուրքական պատմական ընկերությունը 1937–1943թթ–ին կատարել է հնագիտական ուսումնասիրություններ, ըստ որի՝ Արևելյան Անատոլիան ներկայացվում է հետևյալ ժամանակագրական առումներով.

Սեր թվարկությունից առաջ ընկած ժամանակահատվածը (հին քարի դար, միջին քարի դար, kolkolitik, պղնձի դար).

Խեթական դարաշրջան.

Թրակիայի դարաշրջան.

Հելլենական–հռոմեական դարաշրջան.

Բյուզանդական դարաշրջան.

Սելջուկյան դարաշրջան.

Օսմանյան դարաշրջան.

Անատոլիայում բնակված խեթերից մինչև օսմանյան ժամանակաշրջանին վերաբերող հրապարակումներում Թուրքական պատմական

ընկերությունն անդրադարձել է այդ տարածաշրջանում ապրող գրեթե բոլոր ժողովուրդներին, բացի հայերից¹³:

Այդուհանդերձ, «Քրոսոլոլի» պատմությանն անդրադառնալիս ընկերության մասնագետներն օգտվել են կովկասյան, իրանական և հայկական աղբյուրներից: Որպես հայկական աղբյուր օգտագործվել է «Collection d' Historiens Armeniens» Թավրիզցի Առաքելի աշխատանքը:

Կարսի պատմությունն ուսումնասիրելիս ընկերությունը չի ակնարկում այնտեղ մեծամասնություն կազմող հայերի մասին, դեռ ավելին՝ նշելով Անիում կատարված պեղումների մասին, չի նշում այնտեղ գոյություն ունեցող որևէ հայկական եկեղեցու կամ հուշաքարի, ինչպես նաև չի նշվում այնտեղ ապրած հայերի մասին: Բացի այդ, Թուրքական պատմական ընկերությունն ուսումնասիրել և երրորդ կոնգրեսում ներկայացրած Մալաթիայի, Ուլտաղի, Կարսի, Իգդիրի, Վանի և այլ շրջանների գյուղերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության մեջ ևս հայերի մասին ոչինչ չի նշվում: Դեռ ավելին՝ Թուրքական պաշտոնական պատմագրության մեջ Անատոլիայում մշակույթի և արվեստի տարածման հարցում խիստ կասկածի տակ է դրվում Բուլղար հնագետների և պատմաբանների այն պնդումները, որ այդ հարցում հսկայական է հայ արվեստագետների լուծման¹⁴:

Թուրքական պատմագրության մեջ գիտակցաբար խեղաթյուրվում է իրականությունը Թուրքիայում գոյություն ունեցող հին կառույցների ճարտարապետների հարցում: Այդ կասկացությամբ նշվում է. «Օտար-երկրացիներ կան, որոնք նշում են, թե իբր Թուրքիայում գոյություն ունեցող կառույցների մեծ մասը կառուցել են հույն, հայ, արաբ և պարսիկ ճարտարապետները»¹⁵:

Թուրքական պատմական չորրորդ կոնգրեսը տեղի է ունեցել 1948 թվականի նոյեմբերի 10-ից 14-ը Անկարայում: Ինչպես ընկերության աշխատանքներին, այնպես էլ կոնգրեսի կազմակերպմանը հետևում էին Հանրապետության այն ժամանակվա նախագահ Իսմեթ Ինոնյուն, վարչապետ Հ. Սաքան, ԹՄԱԺ-ի նախագահ Շ. Սարաջօղլուն, նախարարները և Գլխավոր շտաբի պետ Ս. Օմուրթաքը¹⁶:

Թուրքական պատմական չորրորդ կոնգրեսին ի թիվս այլ նյութերի ներկայացվել է ուսումնասիրություն՝ «Օսմանյան ղեկավարությունը և վրացիները» թեմայով: Այն հետազայում հրապարակվել է ընկերության պաշտոնական տեղեկագրում: Թուրք պատմաբաններին անհանգստություն է պատճառել վրացի երկու պատմաբաններին կողմից ներկայացված «վրացական հարցը», որի արդյունքում էլ ուսումնասիրվել են Մահմուդ Երկրորդի ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթերը¹⁷: Վրացի պատմաբանները նշում են, որ թուրքերը ամենամեծ վատություններն են կատարել, ամենամեծ դաժանություններն են գործել վրացիների

նկատմամբ, վրացիներին պարտադրել են մոռանալ իրենց կրոնը և ընդունել իսլամ: Այդ պատճառով էլ վրացի ժողովուրդը, միավորվելով ռուսների հետ, պատերազմել է օսմանցիների դեմ¹⁸:

Հետաքրքրական է, որ ընկերությունը պաշտոնական պատմագրության մեջ ազատ անդրադարձել է «վրացական հարցին», վստահ լինելով, որ նման վտանգ Թուրքիային չի սպառնում: Անդրադառնալով «վրացական հարցին»՝ ընկերության պատմաբանները չեն անդրադարձել իրենց քաջ հայտնի «հայկական հարցին»՝ բնականաբար գիտակցելով դրա խիստ վտանգավոր հետևանքները: Կարևոր է այն փաստը, որ ստեղծվելով 1930 թվականին, Թուրքական պատմական ընկերությունն իր հրապարակումներում Հայկական հարցին անդրադարձել է միայն 1950-ական թվականներից, այսինքն՝ երկարատև մտորումներից հետո միայն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Рустамов Ю., Современная турецкая буржуазная социология. Баку, Изд. АН Азерб. ССР, 1967, с. 153.
2. Atatürkün Söylev ve-Demecleri, c. 2, Ankara, 1959, s. 189
3. İğdemir U. "Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu" – Türk Tarih Kurumu Basimevi, Ankara 1973, s. 4, ss. 158
4. Տե՛ս նույն տեղում, էջ 7:
5. Տե՛ս նույն տեղում, էջ 11:
6. Տե՛ս նույն տեղում, էջ 13 :
7. Տե՛ս նույն տեղում, էջ 37:
8. İğdemir U. Atatürk ve Belleten, Belleten 3–2nci / 10(1939) 355 – 356, lev. XCIX.
9. Տե՛ս նույն տեղում, էջ 41:
10. İğdemir U. "Cumhuriyetin 50 Yılında Türk Tarih Kurumu", Türk Tarih Kurumu Basimevi, Ankara 1973, s. 41, ss. 158.
11. Տե՛ս նույն տեղում, էջ 15:
12. Տե՛ս նույն տեղում, էջ 20:
13. Տե՛ս նույն տեղում, էջ 14 – 46:
14. Տե՛ս նույն տեղում, էջ 621:
15. Տե՛ս նույն տեղում, էջ 697:
16. IV Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basimevi, Ankara 1952, s. XI, ss. 518.
17. Տե՛ս նույն տեղում, էջ 317:
18. Տե՛ս նույն տեղում, էջ 318:

**ՀԵՏԱՄՆԱՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻՍՅԵԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
«ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԱՏՈՒԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ» (ՀԱՄԱՆ)
ՇՈՒՐԶ**

Հանրապետական Թուրքիայի կազմավորումից հետո թուրքական կառավարողների առջև ծառացավ երկրի արևելյան հետամնաց վիլայեթների զարգացման հարցը (Dogu meselesi կամ dogu sorunu), որի արմատները գալիս էին դեռևս Օսմանյան կայսրության ժամանակներից: Մինչ օրս աշխարհագրական այս տարածաշրջանը շարունակում է դուրս մնալ Թուրքիայի տնտեսական համակարգում շարունակվող սերտաճման գործընթացներից: Հանդիսանալով Թուրքիայի գյուղատնտեսական «մթերանոցը»՝ այս վիլայեթներն արդյունաբերականացման տեսանկյունից շատ թույլ են զարգացած ի համեմատ արևմտյան և կենտրոնական շրջանների: Արևելյան Անատոլիայի սոցիալ-տնտեսական, քաղաքական և ազգային խնդիրներին առնչվող հարցերը էլ ավելի թեժացան Թուրքական Հանրապետության կազմավորումից հետո: «Արևելյան շրջաններ» կոչված այս տարածաշրջանը ներառում է հետևյալ վիլայեթները՝ Ադրի, Ադիյաման, Արդվին, Բիհգյոյ, Բիթլիս, Վան, Գազիանթեպ, Գիրեսուն, Գյումուշհանե, Դիարբեքիր, Կարս, Մալաթիա, Մարաշ, Մարդին, Մուշ, Ռիզե, Սըվաս (արևելյան մասը), Սղերդ, Ուրֆա, Հաքյարի, Տրապիզոն, Թունջելի, Էյլազիզ, Էրզինջան, Էրզրում: Դրանց ընդհանուր տարածքը 290,7 հազ. քառ. կմ է, որը կազմում է երկրի ողջ տարածքի 37,3¹:

Այս շրջանների նկատմամբ առանձնահատուկ ուշադրություն դրսևորվեց հատկապես 1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո: Արևելյան վիլայեթների զարգացման առաջնության դրույթը տեղ գտավ պաշտոնաթող ծովակալ Բ. Ուլուսուի գլխավորած կառավարության ծրագրում²: Դրանից առաջ, Թուրքիայի տարածքային անհավասարաչափ զարգացման ցուցանիշները ոչ միայն չհարթեցվեցին, այլ, ընդհակառակը, գնալով այդ տարբերությունն ավելի մեծացավ: 1963-1974թթ. ընկած ժամանակահատվածում Թուրքիայի Արևելյան և

¹Հայկ Դեմոյանը ԵԴՀ պատմության ֆակուլտետի դասախոս է, պատմ գիտությունների թեկնածու:

Հարավարևելյան իլերի բաժինը երկրի արդյունաբերության հավելյալ արժեքի արտադրության ծավալի մեջ նվազեց 7,8 տոկոսով՝ իջնելով մինչև 4 տոկոս¹։ Զինվորական կառավարության ծրագրում նշվում էր, որ «հաշվի առնելով տեղական ռեսուրսները և աշխատուժը՝ կառավարությունը կգործադրի բոլոր ջանքերը, առանձին շրջանների մասշտաբով արդյունաբերական ներուժի ստեղծման համար»⁴։ Քաղաքացիական իշխանության վերահաստատումից հետո Օգալի կառավարությունը, ի թիվս այլ հրատապ լուծում պահանջող խնդիրների, իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև հետամնաց վիլայեթների զարգացման հարցերի վրա, որը, բացի գուտ տնտեսական բնույթից նաև կարևոր սոցիալական-քաղաքական խնդիր էր դարձել։ Այդ հարցին վարչապետ Թուրգութ Օգալն անդրադարձավ 1983թ. դեկտեմբերի 19-ին Մեջլիսում՝ կառավարության ծրագրի ներկայացման ժամանակ⁵։ Առաջին անգամ թուրքական իրականության մեջ պետական մախարարներից մեկին հանձնարարվեց հետամնաց Արևելյան և Հարավարևելյան վիլայեթների զարգացման հարցերի վարույթը։

«Մայր-Հայրենիք» կուսակցության առաջադրած միջոցառումների ծրագիրը մախատեսում էր խրախուսման հատուկ միջոցների կիրառում, ուղղված բնական ռեսուրսների արագացված շահագործմանը և օգտագործմանը, երկրագործության և ամասնապահության զարգացմանը, դրանց արտադրանքի գնագոյացման բարելավմանը, ինչպես նաև մախագծեր, որոնք կապահովեին տեղական բնակչության զբաղվածությունը։ Նախատեսվում էր նաև էժան և երկարաժամկետ վարկերի տրամադրում, ճանապարհների, դպրոցների, հիվանդանոցների, էներգո և ջրամատակարարման, կապի և սոցիալական նշանակության մյուս ոլորտներում կապիտալ ներդրումների արագացումը։ Որոշակի զիջումներ էին մախատեսվում նաև տարածաշրջանի ծառայողներին, մասնավորապես՝ նրանց բնակարանով ապահովելու դեպքում⁶։ Կարևոր տեղ էր հատկացվում մասնավոր ներդրումներին, որոնք այս շրջաններում շատ թույլ էին արտահայտված։

Երկար տարիներ Թուրքիայի արևելյան վիլայեթներից դեպի արևմուտք բնակչության ներքին տեղաշարժը բացասաբար էր անդրադառնում արևելյան շրջանների աշխատանքային ռեսուրսների վրա։ 1984 թվականի դրությամբ Թուրքիայի բնակչությունը կազմել էր 48.378.714 մարդ։ Պետական վիճակագրական ինստիտուտի տվյալները վկայում էին, որ Թուրքիայի մի շարք հեռակա շրջաններում բնակչության տեղաշարժի պատճառով նկատվում է բնակչության նվազում⁷։ Տարեցտարի ուժգնացող ոչ հավասար տարածաշրջանային զարգացման հակումները բացառելու և արտադրողական ուժերի տարածքային կառուցվածում գոյություն ունեցող

տարբերությունները վերացնելու համար անհրաժեշտ էր կիրառել հետևյալ միջոցառումները,

ա. մշակել ռացիոնալ տնտեսության և տեխնոլոգիաների ճյուղային համակարգ, որը առավելագույնս կօգտագործեր հետամնաց շրջանների եղած միջոցներն ու պայմանները,

բ. արտադրական և հասարակական ենթակառույցների զարգացում,

գ. բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացում և որակյալ կադրերի պատրաստում,

դ. հետամնաց շրջաններից բնակչության տեղաշարժի կարգավորում,

ե. հետամնաց Արևելքի զարգացման պետական հիմնադրամի ստեղծում,

զ. պետության ներդրումային գործունեության բարելավում, հետամնաց շրջանների զարգացման լրացուցիչ ազդակների ապահովման, մասնավորապես սոցիալական ծրագրերի պետական ֆինանսավորման միջոցով, երկրի տարբեր հատվածների կենսամակարդակների հավասարեցում,

է. զբաղվածության ոլորտում կտրուկ տարբերությունների վերացում, ոչ գյուղատնտեսական ճյուղերում աշխատատեղերի ստեղծում և աճող գործազրկության զսպում⁸:

1987 թ-ին ստեղծվեց Նախընտրելի ենթաշրջանների ներդրումային հողինգը, որի հիմնական նպատակը արևելաանատոլիական տարածաշրջանում արդյունաբերական շինարարության ֆինանսավորումն էր: Հետաքրքրական է այն փաստը, որ Օզալի հռչակած համատարած տնտեսական ազատականացման քաղաքականությունը համարյա չէր տարածվում այս շրջանների վրա: Ինքը՝ Թուրգութ Օզալը, այդ առումով նշեց հետևյալը. «Պետության դերը ընկերությունների կազմակերպման և շահագործման ոլորտում ամբողջովին կփոխադրվի ժողովրդին, միակ բացառությամբ, որ Արևելյան և Հարավարևելյան, այսինքն՝ նախընտրելի ենթաշրջաններում պետությունը դեռ կպահպանի իր գերիշխող դիրքերը»⁹: Պետությունը տարածաշրջանային զարգացման ոլորտում մասնակցում էր օրենսդրական գործառնությունների, ներդրումային գործունեության և հովանավորչական միջոցների կիրառմամբ՝ ուղղված հետամնաց շրջաններ մասնավոր սեկտորի ներգրավմանը:¹⁰ Այդ նպատակով պետությունը կիրառում էր ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման, հարկերից և մաքսատուրքերից ազատման և այլ կարգի արտոնություններ:

Երկիրը կառավարողների կողմից հետամնաց և թույլ զարգացած հարավարևելյան վիլայեթների զարգացման ուղղությամբ կիրառվող միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում

«Հարավարևելյան անատոլիական մախագիծը» (կրճ. ՀԱԱՀ, թուրք. Guneydogu Anadolu projesi – GAP): Նման մախագծի իրականացման գաղափարն առաջին անգամ հղացել էր Քեմալ Աթաթյուրքը: 1930-ական թվականներին սկսված հետախուզական աշխատանքները շարունակվեցին 1954թ-ին Պետական հիդրավիկ աշխատանքների վարչության կողմից, որի կազմում 60-ականներին ստեղծվեցին Եփրատի պլանային վարչությունը և Դիարբեքիրի տարածաշրջանային վարչությունը: Այս երկու վարչությունները նպատակ ունեին հետազոտելու Եփրատ և Տիգրիս գետերի վրա հիդրոկայանների ու ջրամբարների կառուցման հնարավորությունները և կոնկրետ աշխատանքների իրականացման եղանակները: 1977թ. կառավարության որոշմամբ այս երկու մախագծերը միացան և կոչվեցին «Հարավարևելյան անատոլիական մախագիծ»¹¹: Նախագիծն ընդգրկում է Եփրատի ու Տիգրիսի հարավային հոսանքների միջև ընկած տարածքները՝ ներառելով 12 ենթամախագծեր (Աշադի Ֆըրատ, Սընըր Ֆըրատ, Սուրիչ-Վազիկի, Ադըյաման-Քյախտա, Գազիանթեփ-Արաբան, Դիջլե-Կրալ Կըզը, Բատման-Սիլվան, Գարզան, Իլիսու, Ջիզըն)¹²: Ռեգիոնալ առումով այն ընդգրկում էր հետևյալ վիլայեթները՝ Ադըյաման, Բատման, Դիարբեքիր, Գազիանթեպ, Քըլըս, Մարդին, Սըղուդ և Սըրմեկ: Նախագծով նախատեսվում էր մինչև 2005 թ. կառուցել 22 ամբարտակներից բաղկացած մի համակարգ, որը մեծացնելու էր ոռոգելի տարածքները, միաժամանակ ավելացնելով էլեկտրաէներգիայի արտադրությունը: Նախագծի ինժեներներից Օլջայ Ունվերի կարծիքով՝ մախագծի շինարարական աշխատանքների ավարտից հետո կստեղծվեին լրացուցիչ 3,5 մլն աշխատատեղեր, քառապատկելով այս տարածքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալը¹³: Ի հավելումն ոռոգման և էներգետիկ ծրագրերի՝ ՀԱԱՆ-ը ներառում է նաև տարածաշրջանում արդյունաբերության, տրանսպորտի, հանքահանության, հեռուստահաղորդակցության, առողջապահության, կրթության զբոսաշրջիկության և ենթակառույցների զարգացման ծրագրեր: 80-ականների ընթացքում մախագիծը դարձավ սոցիալ-տնտեսական բնույթի բազմաճյուղային տարածաշրջանային ծրագիր: ՀԱԱՆ-ի իրականացմամբ նպատակ էր հետապնդվում.

ա. զարգացնել տարածաշրջանի բոլոր հողային և ջրային պաշարները տնտեսության և բարեկեցության մակարդակը բարձրացնելու համար.

բ. հարթեցնել Թուրքիայի այս և մյուս շրջանների միջև եղած անհավասարություններն արտադրության և բարեկեցության մակարդակի բարձրացմամբ.

գ. բարձրացնել տարածաշրջանի արդյունավետության և աշխատունակության մակարդակը.

դ. բավարարել բնակչության արագ աճի և ուրբանիզացիայի հետևանքով ենթակառույցների նկատմամբ աճող պահանջարկը.

դ. գյուղական շրջաններում կազմակերպել տնտեսական և ֆիզիկական ենթակառույցներ և այդ ճանապարհով ուղղորդել քաղաքային բնակչության աճը ցանկալի ուղղությամբ.

ե. նպաստել տնտեսական աճի ազգային խնդիրների լուծմանը, արտահանման խրախուսմանը և տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը¹⁴:

1989 թ. նոյեմբերի 6-ին No. 20334 օրենքով ստեղծվեց ՀԱՄՆ-ի Տարածաշրջանային զարգացման կազմակերպությունը և ՀԱՄՆ Բարձրագույն խորհուրդը, որը բարձրագույն որոշում կայացնող մարմինն էր և պատասխանատու էր բոլոր ծրագրերի, մախագծերի և պլանների հետազոտման և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Այս խորհուրդը գլխավորում էր Թուրքիայի պետական մախարարը¹⁵:

Турция прошла уже четыре этапа модернизации, первый из которых (1920—1930-е гг.) характеризовался созданием национального государства, укреплением его основ и институтов, второй (1946—1950-е гг.) — установлением многопартийности и экономической либерализацией, третий (1961—1965 гг.) преследовал цель структуризации политической системы и установления парламентской демократии, а четвертый (1980-е гг.) осуществил приватизацию и установление демократической политической системы. Сегодня страна стоит на пороге следующего этапа модернизации, и опоздание с этим этапом может привести к новым и тяжелым кризисам, и многое здесь зависит от степени осознания руководством страны необходимости новой модернизации и его решимости провести ее, каковой, скажем, обладал Тургут Озал. Примечательно, что политическое развитие Турции совпадало с поворотными пунктами в мировом политическом и экономическом порядке, когда начинался новый ход развития и на повестке дня оказывалась адаптация к этим внешним процессам. Таковы были периоды 1920—1930-х годов, когда Ататюрк воспринял мировую тенденцию авторитарной—тоталитарной модернизации, в 1946—1950-х гг., когда в мире шел процесс либерализации, в 1980-х, когда Озал пошел по пути, который совершали тогда Рейган и Тэтчер. Теперь Турции предстоит решать свои проблемы в рамках процесса глобализации, интеграции и всеобщей демократизации.

Перед Турцией начала XXI века стоят проблемы улучшения ситуации в сфере защиты прав человека, поиска баланса между религией и лаицизмом, установления мира в юго-восточной Анатолии и признания культурных прав граждан курдской национальности, необходимости снижения роли генералитета в политической жизни страны, в частности, реструктуризация СНБ по американскому аналогу. Осуществление этих реформ является необходимым условием для вступления Турции в ЕС. Еще в 1980-х известный турецкий публицист, нынешний министр иностранных дел Турции Исмаил Джем отмечал, что "Турции необходимо, с одной стороны, обеспечить безопасность личности и целостность государства, с другой же стороны, повысить в нашем народе уровень современности и закрыть пути для "несовременного расизма"⁴⁵. Кроме того, по нашему мнению, чтобы осуществить реальную демократизацию, Турция вынуждена будет также критично пересмотреть свою историю.

Только будущее покажет будут ли осуществлены вышеназванные реформы. Тут возможны и линейная эволюция к созданию "гражданского общества", и тяжелый переход через новые кризисы, и застой или возврат к традиционному кемализму. Думается, что Турция может играть первостепенную роль во всем регионе, но не на чисто националистической основе, а как интегральная часть западных структур.

В этом плане, как уже упоминалось выше, Турции нужны лидеры, остро чувствующие потребность в обновлении политической и экономической систем страны. Это поколение лидеров стоит перед вызовами установления эффективного управления страной, поиска оптимальной модели отношений с этническими меньшинствами, преодоления перманентного кризиса в экономике. Десятый президент Турции Ахмед Сезер основное внимание уделяет именно осуществлению демократических реформ и укреплению политической системы. Сезер является выразителем интересов новой политической элиты — слоя, который начал формироваться еще в период реформ Озала. Это в основном молодые люди, профессионалы, с высшим образованием, европейски ориентированные.

Таким образом, на наш взгляд, определяющими факторами и приоритетами политического развития Турции в обозримом будущем станут: (1) новый этап модернизации политической, экономической и социальной систем, (2) определение более четкой и эффективной роли и места как государственных структур, так и политических

партий, (3) борьба за пересмотр или сохранение политической роли армии, (4) проблема лидерства, осуществление политической смены поколений и выход на арену нового поколения лидеров, более открытого и более адаптированного к современным реалиям, (5) разработка и реализация внешнеполитической стратегии, адекватной вызовам нового века, (6) выбор пути развития на базе четырех парадигм: прозападная ориентация, кемалистский национализм, экспансионистский национализм и исламизм, причем, с возможным синтезом элементов каждой модели с элементами остальных парадигм развития.

ПРИМЕЧАНИЯ

1. K.-D. Grothusen. Kemal Atatürk. – Südosteuropa Mitteilungen. N 2, 1982, S. 13
2. К. Ататюрк. Избранные речи и выступления. Москва, 1966, с. 220
3. Там же, сс. 269–270
4. Ф.Фукуяма. Неясность национального интереса. — Независимая газета. 16.10.1992
5. К. Ататюрк. Избранные речи и выступления. Москва, 1966, с. 315
6. Там же, с. 402
7. Ռ.Գ.Սահակյան. Կայսրությունից դեպի ազգային պետություն. — «Ինքնություն», Երևան, 1995, էջ 137
8. M. Heper. Islam: Polity and Society in Turkey. – The Middle East Journal, Summer 1981, vol. 35, N 3, pp. 355–356
9. K. Karpat. Society, Economics and Politics in Contemporary Turkey. – World Politics, vol. XVIII, N 1, October 1964, p. 54
10. R. Davison. Environmental and Foreign Contributions. in R. Ward, D.A. Rustow. The Political Modernization in Japan and Turkey. Princeton, 1964, p. 93
11. T.Z. Tunaya. Türkiye'nin Siyasi Hayatında Babililaşma Hareketleri. Istanbul, 1960, s. 119
12. U. Steinbach. Das politische System. – Informationen zur politischen Bildung. Türkei, N 223, 1989, S. 35
13. Если в 1995г. Партия Верного Пути уступила лидерство исламисткой Партии Благоденствия, то на выборах 1999г. и ПО, и ПВП вообще оказались на четвертом и пятом местах, пропустив вперед социал-демократическую ЛДП, национал-пантюркистскую Партию Национального Действия и исламистко-консервативную партию Добродетели ("Fazilet").
14. S. Cornell. Turkey: Return to Stability? – Middle Eastern Studies, vol. 35, N 3, October 1999, p. 6
15. Die Krise der Türkei. Bonn, 1981, S. 8
16. С 1972г. в Турции было создано три происламские партии — Партия национального спасения, партия "Благоденствие" и партия "Добродетель". В лице своего лидера — Неджметтина Эрбакана ПНС и ПБ были представлены в правительстве на уровне вице-премьера (в кабинетах Эджевита и Демиреля в 1973—1977гг.) и премьер-министра (в коалиции с Партией Верного пути в 1996—1997гг.).

17. Մ. Մելքոնյան. Ձիմվորականության դերը Թուրքիայի քաղաքական կյանքում. – Ձիմվոր, 10–20.05.1993
18. D.A. Rustow. The Military. in R. Ward, D.A.Rustow. The Political Modernization in Japan and Turkey. Princeton, 1964, p.382
19. U. Steinbach. Die politische Entwicklung. – Informationen zur politischen Bildung. Türkei, N 223, 1989, S. 20
20. Там же, S. 35
21. Մ. Մելքոնյան. Ձիմվորականության դերը Թուրքիայի քաղաքական կյանքում– Ձիմվոր, 10–20.05.1993.
22. Milliyet, 1.07.1995
23. NATO's Sixteen Nations. Turkey. – May, 1998
24. Там же
25. На модернизацию турецкой армии в течение ближайших 25–30 лет потребуется около 150 млрд. долларов – NATO's Sixteen Nations. Turkey. – May, 1998
26. Մ. Մելքոնյան. Ազգային անվտանգության համակարգ. Թուրքիա. – Հայ Ձիմվոր,, 11.02.1998
27. A.L.Karaosmanoglu. European security and Turkey in a Changing Strategic Environment. – Year Book 1989. Special Issue: Southeastern Europe. p. 181
28. «Հայաստանի Հանրապետություն», 26.02.1998
29. Эти противоречия охватывают отношения Турции с тюркскими республиками бывшего Советского Союза, транспортировку нефтересурсов Каспийского региона, проблему присутствия российских войск в Закавказье.
30. S. Elekdag. 2 1/2 War Startegy. – Perceptions, vol.1, N 1, Spring 1996, p. 53
31. S.Talbott. Self–Determination in an Interdependent World. – Foreign Policy. Spring 2000, N 39, p. 10
32. <http://mf.gov.tr>
33. A.L.Karaosmanoglu. European security and Turkey in a Changing Strategic Environment. p. 177
34. M. Walker. The Turkish Mirracle. – The Wilson Quarterly, Autumn 2000, vol. 24, N 4, p. 75
35. Turkish Daily News, 5.01.1998
36. N. Çakar. Turkey's Security Challenges. – Perceptions, vol.1, N 2, Summer 1996, p. 4–6
37. Ազգ. 12.09.1997
38. Там же
39. Там же
40. O. Tunander. A New Ottoman Empire? – Security Dialogue. vol. 26, N 4, December 1995, p.414
41. Там же, p. 413
42. C. Çandar. Atatürk's Ambiguous Legacy. – The Wilson Quarterly, Autumn 2000, vol. 24, N 4, p.89
43. Там же, p.96
44. “Известия”, 6.07. 1990
45. Hürriyet. 10.10.1984

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՏՈ (2001 թ.)**

ԱՄՆ-ի դեմ ուղղված 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունները սկիզբ դրեցին կարևոր ու բազմաբնույթ փոփոխությունների միջազգային հարաբերությունների համակարգում: Թերևս, դրանցից ամենակարևորներից է Ռուսաստանի ընդդեմը ԱՄՆ-ի գլխավորած հակաահաբեկչական կռաւիցիայի մեջ, որը հաստատուն կերպով մատնանշում է այն փաստը, թե որքան խորը փոփոխություններ են կրել Արևմուտքի և Ռուսաստանի հարաբերությունները «սառը պատերազմից» հետո: Ավելի ընդարձակ, պատմական հեռանկարի առումով, այս փոփոխությունները նշանակում են ևս մեկ քայլ հետսառըպատերազմյան աշխարհաքաղաքական կարգի ձևավորման ուղղությամբ:

Ներկա ճգնաժամը, լինելով, ըստ էության, գլոբալ, տարածքային առումով նախ և առաջ ծավալվում է Եվրասիայում և այս հանգամանքի շնորհիվ ներգրավում է իր ոլորտի մեջ՝ որպես կարևոր դերակատարներ մաս այդ տարածաշրջանի պետությունները: Ընթացող գործընթացներում Թուրքիային վերապահված կարևոր դերակատարությունը պայմանավորված է Եվրասիայում նրա քաղաքական, տնտեսական ու ռազմական կշիռով ու ներգրավվածության աստիճանով, ինչպես նաև այն հանգամանքով, որ այդ երկիրը պատմական, մշակութային, կրոնական ու էթնիկական կապեր ունի տարածաշրջանի շատ ժողովուրդների հետ:

Մինչ այժմ ռազմական գործողությունները ընթացել են Թուրքիայի սահմաններից հեռու և ներկա փուլում դեռևս պարզ չէ, թե Թուրքիան առաջիկա ամիսների, հավանաբար մաս տարիների ընթացքում ինչպիսի դեր է ունենալու միջազգային ահաբեկչության դեմ ծավալվող պայքարում: Անկախ ապագա զարգացումների արդյունքներից, կարելի է կանխատեսել,

Ուրբեն Սաֆրաստյանը պատմ. գիտ. թեկնածու է, ՀՀ մաթագահին կից ԱՄԽ-ի աշխատակազմի աշխատակից (1991-1996թթ.), Գերմանիայում ՀՀ դեսպանատան խորհրդական (1996-1997), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ (1998-ից), «Հունբուրդ» (1999) և «Ֆուլբրայթ» (2002) ծրագրերի ստիպենդիանտ:

որ սույն հակամարտությունը փոփոխություններ է մտցնելու եվրասիական և արևմտյան երկրների հետ Թուրքիայի հարաբերություններում և անգամ կարող է նպաստել աշխարհաքաղաքական մոր կարգի ձևավորման ընթացքում Թուրքիայի դերակատարության շրջանակների վերասահմանմանը:

I

Եվրասիան 1990-ականների Թուրքիայի քաղաքական մտքում ու քաղաքականության մեջ. աշխարհաքաղաքական պատկերացումներ և քաղաքական մոտեցումներ

Ինչպես արդեն նշել էինք, ընթացող ճգնաժամի գլխավոր թատերաբեմը Եվրասիան է: Այդ պատճառով իմաստ ունի անդրադառնալ այդ հասկացողության ընկալումներին ու մեկնաբանություններին ժամանակակից Թուրքիայի քաղաքական ու գիտական շրջանակներում: 90-ական թվականների սկզբից «Եվրասիա» հասկացողությունը կարևոր տեղ է զբաղեցնում Թուրքիայում ընթացող քաղաքական քննարկումներում: Այն ընկալվում է որպես հիմնական կոնցեպցիա, որը ուրվագծում է Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարությունը, միջազգային հարաբերությունները և ազգային անվտանգությունը: Չնայած դրա կենտրոնական բնույթին կամ գուցե նաև դրա հետևանքով «Եվրասիա» հասկացությունը մեծապես քաղաքականացված է և գիտական առումով անորոշ սահմանված: Որոշ քաղաքագետներ և գիտնականներ Եվրասիան համարում են գլխավորապես թյուրքական ժողովուրդներով բնակեցված տարածաշրջան, որի մեջ են մտնում Թուրքիան, Բալկանների ու Կովկասի մի մասը, Միջին Ասիայի նախկին խորհրդային հանրապետությունները, Ռուսաստանի Վոլգայի շրջանը և Հյուսիսային Աֆղանստանը: Նման մոտեցումները, որոնք, ըստ էության, հանդիսանում են պանթյուրքիզմի գաղափարախոսության «արդիականացված» խմբագրություններ, լայն տարածում գտան թուրքական վերնախավի ամենատարբեր շրջանակներում, մասնավորապես՝ 1990-ական թվականների սկզբին: Նրանց տուրք տվեց նույնիսկ այնպիսի սովորաբար զգուշավոր քաղաքական գործիչ, ինչպիսին Սուլեյման Դեմիրելն է: 1992 թ. սկզբին, այսինքն՝ Խորհրդային Միության փլուզումից դեռ մեկ ամիս էլ չանցած, նա, զբաղեցնելով վարչապետի պաշտոնը, ազդարարեց «հսկայական Թյուրքական Աշխարհի» ծնունդը, որի սահմանները, ըստ նրա, ձգվում են Ադրիատիկ ծովից մինչև Չինաստան:

Սակայն այս էթնիկական-ծագումնաբանական սկզբունքի վրա հիմնված սահմանումը հետագայում 1990-ական թթ. կեսերից սկսած,

կորցրեց իր մենաշնորհը և ներկայումս ավելի քիչ է տարածված, քան բացառապես քաղաքական պատկերացումների վրա հիմնված Եվրասիայի բնորոշման այլ տարբերակները: Դրանցից առաջինը, հետևելով ներկայումս Արևմուտքի և Արևելքի որոշ երկրներում տարածում գտած տեսություններին, որոնք գտնում են, որ «սառը պատերազմի» տարիներին գոյություն ունեցած «Կապիտալիստական Արևմուտք – Մոցիալիստական Արևելք» հակամարտությունը ներկայումս փոխարինվել է «Հարուստ Հյուսիս – Աղքատ Հարավ» հակամարտությամբ, Եվրասիան բնութագրում է որպես «Հարավ»՝ ի հակադրումն հարուստ և զարգացած «Հյուսիսի»: Երկրորդ տարբերակի կողմնակիցները Եվրասիայի շրջանակների մեջ ներառում են միայն Հարավային Կովկասի և Միջին Ասիայի ութ նորանկախ պետությունները:

Քաղաքական շրջանառության մեջ է դրված նաև Եվրասիայի զուտ աշխարհագրական բնորոշումը, որը առկա է, օրինակ, Թուրքիայի ԱԳՆ-ի վեբսայթի վրա՝ «Եվրոպայից Միջին Ասիա ձգվող ընդարձակ լանդշաֆտ»²: Ըստ էության, այդպիսով փորձ է արվում խուսափել հասկացությունը քաղաքականացնելու մեղադրանքներից: Այնուամենայնիվ, թուրք դիվանագետների հետ շուրջ մեկ տասնամյակի ընթացքում մեր բազմաթիվ հանդիպումները թույլ են տալիս եզրակացնել, որ իր առօրյա գործունեության ընթացքում թուրքական դիվանագիտությունը նախընտրում է հենվել ոչ թե պաշտոնական սահմանման վրա, այլ օգտագործում է այն խիստ քաղաքականացված տարբերակը, որը Եվրասիայի շրջանակները սահմանփակում է վերոհիշյալ ութ նորանկախ պետություններով: Առաջին հայացքից զուտ վերացական հետաքրքրություն ներկայացնող Եվրասիայի սահմանների բնորոշման խնդիրը խորքում ունի կարևոր նշանակություն՝ ներկա ճգնաժամի ընթացքում Թուրքիայի քաղաքականության շարժառիթները բացահայտելու տեսակետից:

Եվրասիայի կոնցեպցիան, որը կենտրոնականներից է գեոպոլիտիկայի բնագավառում, Թուրքիայում սկսել է ուսումնասիրվել միայն վերջերս՝ տարածաշրջանային աշխարհաքաղաքական միջավայրի նշանակալի փոփոխությունների հետևանքով: Թուրք տեսաբանները, օգտագործելով արևմտյան դասական գեոպոլիտիկ մոտեցումները (Հ. Ջ. Մակհիդերից մինչև Ջ. Բեմզիսկի), փորձել են ստեղծել իրենց ուրույն կոնցեպցիաները:

Նրանցից ամենաուշագրավն ու ամբողջականն է Ռամազան Օզեյի կողմից (Մարմարայի համալսարան) առաջ քաշած աշխարհաքաղաքական կոնցեպցիան: Այն կրում է «Թուրքերի գերիշխանության տեսություն» վերնագիրը³: Օզեյի կոնցեպցիայի հիմնական տարրերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. Անատոլիան աշխարհի «միջնաբերդն» է (kale) և Անատոլիայում իշխող երկիրը՝ Թուրքիան, տիրապետելով այդ

միջնաբերդին, հնարավորություն ունի իր հսկողության տակ առնել «ներքին շրջանակի» տարածաշրջանները, որոնք են, ըստ թուրք գիտնականի, Բալկանները, Մերձավոր Արևելքը և Եվրասիան: Ավելին՝ այդ «ներքին շրջանակի» վրա իշխող պետությունը՝ Թուրքիան, վաղ թե ուշ կառավարելու է աշխարհը, եզրակացնում է հեղինակը: Այսպիսով՝ Օգեյը օրինականացնում է Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը՝ համարելով այն այդ երկրի աշխարհագրության բնական արդյունք: Ավելի հեռու գնալով՝ նա Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը դիտում է ոչ թե որպես ինքնանպատակ, այլ ավելի մեծ արդյունքի հասնելու միջոց: Թուրք գեոպոլիտիկների այլ հրապարակումները այսքան ուղղամիտ չեն և այսքան հեռուն չեն գնում, սակայն նրանց մեծ մասը նույնպես պաշտպանում է Եվրասիայում Թուրքիայի գերակայության գաղափարը՝ դիմելով ավելի «նուրբ» ձևակերպումների: Այսպես, օրինակ, Մուսթաֆա Յըլմազը (Հաջեթեփե համալսարան) նույնպես բնութագրում է Թուրքիան որպես «բնական միջնաբերդ», որը գտնվում է Բալկանների, Կովկասի և Մերձավոր Արևելքի կենտրոնում, ինչը նրան հնարավորություն է տալիս կիրառելու «մի շարք երկընտրանքային տնտեսական, քաղաքական ու ռազմական» քաղաքական մոտեցումներ⁴:

Թուրքիայի՝ «բնական» աշխարհաքաղաքական պայմաններից բխող գերակշռող դերը ընդգծելու նպատակով 1990-ական թվականներին գիտական և քաղաքական շրջանառության մեջ է դրվել նաև մեկ այլ հասկացություն՝ «կենտրոնական տերություն»: Համաձայն այդ մոտեցման ջատագովներից Օրալ Սանդերի՝ Թուրքիան, զիջելով իր հզորությանը մի շարք այլ պետությունների և ենթարկվելով «գլոբալ զարգացումների» ազդեցությանը, միաժամանակ, շնորհիվ իր «կենտրոնական տերություն» դիրքի, ինքն է ներագրում այդ զարգացումների վրա⁵:

Թուրքական ժամանակակից աշխարհաքաղաքական ու քաղաքական մտքի մանրամասն հետազոտումը և քննական վերլուծությունը, լինելով ինքնըստինքյան կարևոր գիտական խնդիր, դուրս է սույն հոդվածի շրջանակներից: Անդրադարձը վերը նշված օրինակներին նպատակ ունեն միմիայն խտացրաց ձևով ներկայացնել հիմնական միտումները, որոնք ընկալվում և օգտագործվում են տարբեր ուղղվածության քաղաքական ու հասարակական ուժերի կողմից որպես տեսական աջակցություն քաղաքական բանավեճերում ու քննարկումներում, հիմք հանդիսանալով կոնցեպտուալ բնույթի մոտեցումների ձևավորման համար: Անդրադարձնա՞նք նրանցից կարևորների բնութագրմանը:

1990-ականներին Թուրքիայի ձախ մտավորականներն ու քաղաքական գործիչները, ինչպես նաև իսլամամետ շատ ուժեր ձևակերպեցին Թուրքիայի Եվրասիական քաղաքականության մի այնպիսի տարբերակ,

որն, ըստ էության, իրենից ներկայացնում է լիարժեք այլընտրանք «ավանդորդին» արևմտամետ բնութագրվող քեմալիստական արտաքին քաղաքական ռազմավարությանը: Այս մոտեցման հիմքում դրված է «արևմտյան իմպերիալիզմի» դեմ եվրասիական գլխավոր տերությունների՝ Թուրքիայի, Իրանի ու Ռուսաստանի համագործակցության գաղափարը: Այս տեսակետն առաջ քաշողները քննադատում են Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Արևմուտքի շահերին ստորադաս լինելու և երկրի բուն շահերը անտեսելու համար: Նրանք հանդես են գալիս որպես Թուրքիայի՝ Արևմուտքից անկախ արտաքին քաղաքականության կողմնակիցներ: Նրանց թվում են ինչպես ձախ, այնպես էլ իսլամամետ մտավորականների և քաղաքական շրջանակների նշանավոր ներկայացուցիչներ: Թուրքիայի սոցիալիստական շարժման վետերան Դոդու Փերինչեքը, որը պաշտպանում է վերոհիշյալ տեսակետը, իր գրքերից մեկի համար չափազանց բնորոշ վերնագիր է ընտրել՝ «Եվրասիայի ընտրությունը՝ Թուրքիայի համար անկախ արտաքին քաղաքականություն»⁶:

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական և մտավորական էլիտան, այնուամենայնիվ, հիմնականում արևմտամետ է և հավատարիմ է մնում Աթաթյուրքի ռազմավարական նախընտրությանը: Նրա այդ թեկներկայացուցիչները պրագմատիկ են և քաջատեղյակ, որ Թուրքիան տնտեսապես և քաղաքականապես դեռևս պատրաստ չէ Եվրասիայում միակ քաղաքական գերիշխող ուժի վերածվել: Այդ պատճառով նրանք Թուրքիայի արտաքին քաղաքականության եվրասիական ուղղությունը համարում են Թուրքիա-Արևմուտք հարաբերություններին ստորադաս և ձգտում են Եվրասիայում իրենց քաղաքականությունը կոորդինացնել Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի նպատակների հետ: Միաժամանակ նրանք եվրասիական տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության տարածումը կարևոր հաղթաթուղթ են համարում Արևմուտքի հետ այնպիսի հարցերի սակարկման գործում, ինչպիսին է, օրինակ, Եվրոպական Միությանը Թուրքիայի լիիրավ անդամակցությունը կամ Կիպրոսի խնդիրը:

Եվրասիայի վերաբերյալ թուրք բարձրաստիճան ազդեցիկ զինվորականների աշխարհաքաղաքական և գեոստրատեգիական տեսակետների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք շատ ընդհանրություններ ունեն վերևում նշված արևմտյան ուղղվածության էլիտայի հայացքների հետ: Ջինվորականությունը Եվրասիան և նախ և առաջ Հարավային Կովկասը դիտում է որպես Թուրքիայի անվտանգության համար վտանգ ներկայացնող անկայուն տարածաշրջան: Վտանգի հիմնական աղբյուրնա համարում է Ռուսաստանի ազդեցությունը և ռազմական ներկայությունը այդ տարածաշրջանում⁷: Այսպիսով՝ ակնհայտ է, որ զինվորականության ուշադրությունը գլխավորապես կենտրոնացած է Հարավային

Կովկասի երեք հանրապետությունների վրա: Միաժամանակ, նրանք, ինչպես նաև շատ և շատ թուրքական քաղաքական գործիչներ, գտնում են, որ, ինչպես նշել է հանգստի կոչված գեներալ-լեյտենանտ Սադի Էրգյուվենը, «Թուրքիան գտնվում է աշխարհի կենտրոնում»⁸:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում թուրք բարձրաստիճան զինվորականության շրջանում երևան է եկել ամերիկանետ սպաներից բաղկացած մի խմբավորում, որը միաժամանակ ընդդիմանում է ԵՄ-ի հետ ինտեգրացմանը: Նրանք Եվրասիան դիտում են ոչ թե անկայունության աղբյուր, այլ որպես Թուրքիայի համար կարևոր աշխարհաքաղաքական առավելություն: Չնայած իրենց արևմտամետ կողմնորոշմանը՝ նրանք այդ տարածաշրջանում կանխատեսում են ուժեղ մրցակցություն եվրոպական տերությունների և հատկապես Գերմանիայի հետ: Այս եզրակացությանն է հանգել, օրինակ, 1998 թ. Թուրքիայի ռազմական ակադեմիաների կողմից կազմակերպված սեմինարին ներկայացված իր գեկուցման մեջ գնդապետ Նազմի Չիզմեչին⁹:

Ներկայիս կռալիցիոն կառավարությունում ԱԳՆ-ն գտնվում է Ժողովրդավարական Չախ Կուսակցության (ԺՉԿ) հսկողության տակ, ուստի հատուկ ուշադրություն անհրաժեշտ է դարձնել այդ կուսակցության ղեկավարների հայացքներին: Ընդհանուր առմամբ նրանք պաշտպանում են Թուրքիայի արտաքին քաղաքականության արևմտյան ուղղվածության ռազմավարությունը, սակայն անում են որոշ վերապահումներ: Օրինակ՝ 1995 թ. ներկայիս վարչապետ և ԺՉԿ-ի առաջնորդ Բյուլենք Էջևիթը հանդես էր եկել «Ռեզիդնալ ուղղվածության արտաքին քաղաքականություն» վարելու առաջարկով: Նա գտնում է, որ ապագայում, օգտագործելով Եվրոպայի ու Ասիայի տարրերը, հնարավոր կլինի ստեղծել Եվրասիայի գերտարածաշրջանի պետություններից բաղկացած ընդհանրություն, իհարկե, Թուրքիայի ղեկավարությամբ: Այդ ինտեգրացման գործընթացները նկարագրելու նպատակով նա մույնիսկ առաջարկել է օգտագործել հատուկ տերմին՝ avrasyalasma – եվրասիականացում¹⁰:

Արտգործնախարար Խամայիլ Ջեմը, որը մույնպես ներկայացնում է ԺՉԿ-ն, չի խուսափում հրապարակայնորեն և ամենայն հստակությամբ բացահայտել Թուրքիայի հեռուն գնացող պլանները: Այսպես, օրինակ, ժամանակին նա հայտարարել էր. «Մենք, անտարակույս, կանդամակցենք Եվրոպական Միությանը, սակայն մեր տեսադաշտը ավելի ընդարձակ է: Մեր նպատակն է դառնալ Եվրասիայում որոշումներ կայացնող կենտրոն»¹¹:

Վերևում քննարկված տեսական մոտեցումները ու դատողությունները Եվրասիայի վերաբերյալ, որոնք լայն տարածում են ստացել ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, պարզորոշ

վկայում են, որ այդ տարածաշրջանում Թուրքիայի գերիշխանության գաղափարը՝ այս կամ այն հիմնավորմամբ, կիսում են երկրի ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ու գիտական էլիտաները: Նշենք մեկ, որ երկրի բնակչության լայն խավերը մորանկախ պետություններում Թուրքիայի գերիշխանության հաստատումը ընկալում էին, ինչպես գրում են հետազոտողներ Բյուլենթ Գյոքայը և Ռիչարդ Լանգհոռնը, որպես հնարավորություն «վերագտնելու անցյալի իրենց մեծությունը»¹²:

1990–ական թվականներին Թուրքիան փորձեց իրականացնել Եվրասիայում իր գերիշխանության հաստատման երազանքը: Նա չափազանց ակտիվ էր այդ տարածաշրջանում: Սակայն գործադրած մեծագույն ջանքերը հիմնականում ապարդյուն անցան, թուրքական դիվանագիտությանը չհաջողվեց հասնել ցանկալի արդյունքների: Նա փաստորեն կրեց ծանր պարտություն Կենտրոնական Ասիայում և արձանագրեց միայն սահմանափակ ձեռքբերումներ Կովկասում¹³: 1990–ականների վերջում – 2000–ականների սկզբում շատ թուրք մասնագետների ու քաղաքական գործիչների համար պարզ դարձավ, որ Թուրքիան չի հասել տարածաշրջանում ղեկավար դեր ստանձնելու իր գլխավոր ստրատեգիական մպատակին: Սկսվեցին մոր քաղաքական գծի փոփոխումները¹⁴:

II

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 2001թ. հետսեպտեմբերյան ճգնաժամի ընթացքում

Սեպտեմբերի 11–ի ահաբեկչական հարձակման ու դրա դեմ ԱՄՆ–ի հավանական փոխվրեժի կապակցությամբ Թուրքիայի առաջին արձագանքը բնագոյային զգուշավորության բնույթ էր կրում: Թուրքիան պաշտոնապես հայտարարեց, որ Վաշինգտոնն ու Անկարան միջազգային ահաբեկչության դեմ պայքարում ունեն ընդհանուր շահեր՝ հրաժարվելով ԱՄՆ–ին օգնելու կոնկրետ խոստումներից: ԱՄՆ–ի հետ համագործակցելու Թուրքիայի վերոհիշյալ հայտարարությունը կատարվել էր NATO–ի կողմից հաստատված կոլեկտիվ գործողությունների կոմտեքստում՝ հենվելով Հյուսիսատլանտյան պայմանագրի V հոդվածի վրա: Ըստ այդ հոդվածի փոխադարձ պաշտպանությանը վերաբերող կետի՝ դաշինքի անդամ որևէ երկրի վրա հարձակման դեպքում անդամ բոլոր երկրները վերջինիս պետք է պաշտպանեն: Ավելի պարտավորեցնող քայլերից Թուրքիայի ղեկավարությունը սկզբնական փուլում խուսափում էր: Այս

կապակցությամբ հատկանշական է արտգործնախարար Ջեմի հայտարարությունը. «Այս նոր իրավիճակում թուրք ժողովրդի անվտանգությունը ավելի կարևոր է, քան որևէ այլ բան»¹⁵:

Ուշագրավ է, որ ահաբեկչության դեմ ԱՄՆ-ի պատասխան գործողությունների կապակցությամբ ամերիկացի և թուրք բարձրաստիճան պաշտոնյաների շփումները սկսվեցին բավականին ուշ, ինչը որոշ թուրք մեկնաբանների կարծիքով վկայում է, որ ներկայիս Թուրքիայի ղեկավարությունը չի վայելում ԱՄՆ-ի լիովին վստահությունը: Պետքարտուղար Զոլին Փաուելը Ջեմին հեռաձայնեց միայն սեպտեմբերի 17-ին՝ տեղեկացնելու համար ԱՄՆ-ի գործողությունների հետագա ծրագրի մասին: Միայն դրանից հետո Թուրքիայի ղեկավարները հնարավորություն ունեցան ավելի ճշգրիտ հաշվարկել իրենց քաղաքականությունը արագ փոփոխվող իրավիճակում:

Աֆղանստանում հակաահաբեկչական գործողություններ ծավալելու ԱՄՆ-ի որոշման նկատմամբ Թուրքիայի ղեկավարության առաջին հրապարակային արձագանքը մտավախությունն էր առ այն, որ դա կարող էր բացասական հետևանք ունենալ միջինասիական պետությունների համար: Ավելի ուշ Թուրքիայի Գլխավոր Սպայակույտի (ԳՍ) պետ Հյուսեյն Բըվրըքօղլուն մի քանի անգամ զգուշացրեց ԱՄՆ-ին՝ Աֆղանստանի լեռներում կռվելու նպատակով չուղարկել ցամաքային զորամիավորումներ, ասելով, թե «այնտեղ ուղարկված ուժերը կորստի են մատնվելու»¹⁶: Նրա ոչ պաշտոնական արտահայտություններն այդ թեմայով ավելի կտրուկ էին. Աֆղանստանում ցանկացած ցամաքային գործողություն հավասարազոր է «խելացնորության»¹⁷:

Չմայած այդ վերապահումներին՝ Թուրքիան, այնուամենայնիվ, հայտնեց իր սկզբունքային պատրաստականությունը օժանդակել ԱՄՆ-ին հակաահաբեկչական պատերազմում: Թուրքիայի ղեկավարության հիմնական մտահոգությունն այն էր, թե ինչ ձև է ընդունելու այդ մասնակցությունը: Ըստ երևույթին, քննարկվում էին այնպիսի տարբերակներ, որոնք չէին նախատեսում ուղղակի մասնակցություն ռազմական գործողություններին: Սեպտեմբերի 27-ին արված վարչապետ Էջլփի հայտարարության համաձայն՝ թալիբների դեմ ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով Աֆղանստան թուրքական ստորաբաժանումներ ուղարկելու հարց «օրակարագում չկա»¹⁸:

Թե կոնկրետ ինչ աջակցություն պատրաստ էր տրամադրել այդ փուլում Թուրքիան ԱՄՆ-ին հայտնի դարձավ ԳՍ պետի տեղակալ Յաշար Բյույուքանըրը հայտարարությունից, որով նա, ի դեպ, հանդես եկավ այն նույն օրը, երբ Վաշինգտոնում Ջեմը հանդիպում էր Փաուելի հետ, այդպիսով տեղյակ պահելով ԱՄՆ-ի ղեկավարությանը Թուրքիայի

բարձրագույն զինվորականության դիրքորոշման մասին: Նա մասնավորապես հայտնեց, թե Թուրքիան ԱՄՆ-ի հետ «կփոխանակի իր ինֆորմացիան ու պատկերացումները և կհամագործակցի անվտանգության բոլոր բնագավառներում»: Այլ կերպ ասած, դա նշանակում էր, որ Անկարան պատրաստ էր ԱՄՆ-ին տրամադրել անհրաժեշտ հետախուզական ինֆորմացիա և մասնակցել հակաթալիբյան Հյուսիսային դաշինքի՝ մասնավորապես գեներալ Դոստումի (վերջինս սերտ կապեր ունի Թուրքիայի հետ, իսկ 1998 թ. Հյուսիսային Աֆղանստանից վոնդվելուց հետո երեք տարի վտարանդիության մեջ է ապրել Թուրքիայում) ուժերը վարժեցնելու և սպառազինելու գործում:

Վաշինգտոնում Ջեմի հանդիպումներից հետո Թուրքիան համաձայնվեց ԱՄՆ-ին տրամադրել նաև դիվանագիտական աջակցություն եվրասիական տարածաշրջանում և իսլամական երկրներում: Թուրքիան նաև որպես սիմվոլիկ ժեստ խոստացավ հատուկ նշանակության փոքրիկ ջոկատ ուղարկել Աֆղանստան: Վաշինգտոնում տեղի ունեցած այդ հանդիպումներից ամերիկացիները չափազանց բավարարված էին, իսկ Փաուսելը գովաբանել էր Թուրքիային հակաահաբեկչական գործողություններին օժանդակելու հարցում ԱՄՆ-ի յուրաքանչյուր խնդրանքը բավարարելու համար: Անկարան իր հերթին այդ բանակցությունների արդյունքները մեկնաբանել էր որպես դիվանագիտական հաղթանակ և կամաչ լույս ավելի ակտիվ քաղաքականություն վարելու համար:

Թուրքիայի քաղաքականության հիմնական նպատակները որոշվեցին հոկտեմբերի 5-ին Անկարայում տեղի ունեցած Թուրքիայի նախարարների խորհրդի նիստին: Դրանք, ըստ մեր մեկնաբանության, հետևյալն էին.

– օգտագործել հակաահաբեկչական գործողություններում Թուրքիայի մասնակցությունը ԱՄՆ-ից ու ԵՄ-ից զիջումներ ստանալու նպատակով այնպիսի հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են Թուրքիայի լիիրավ անդամակցությունը ԵՄ-ին և ընգրկումը Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ESDP) որոշում կայացնող մեխանիզմներում, Կիպրոսի հիմնախնդիրը և ֆինանսական աջակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ԱՄՆ-ից, ինչպես նաև ռազմական օգնություն ԱՄՆ-ից,

– օգտագործել ստեղծված իրավիճակը՝ Թուրքիայի քաղաքական և ռազմական ազդեցությունը եվրասիական պետություններում, ներառյալ Աֆղանստանում, ուժեղացնելու նպատակով:

Դրանից հետո Թուրքիայի քաղաքականությունն ընդունեց ընդգծված ակտիվ տեսք: Իշխանամետ «Turkish Daily News» օրաթերթը ամենայն հստակությամբ ընդգծեց, թե «թուրք հասարակությունը պետք է համոզվի, որ մենք կարող ենք և պետք է առանցքային դեր ունենանք ահաբեկչության

դեմ պայքարում»¹⁹։ Դեկավար դեր ստանձնելու նպատակով Թուրքիան իրականացրեց դիվանագիտական մի շարք նախաձեռնություններ, որոնցից կարելի է նշել Թուրքիայի առաջարկը այդ երկրում անցկացնել ԵՄ և Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության անդամ երկրների ներկայացուցիչների հանդիպում։ Այս նախաձեռնությունը հաստատվեց, սակայն դրա իրագործումը հետաձգվեց մինչև 2002 թ. փետրվար։ Իսկ Անկարայի առաջարկը՝ կազմակերպել հակաթալիբյան ուժերի հանդիպում Ստամբուլում Թուրքիայի հովանու ներքո, չիրականացավ հակաթալիբյան կոալիցիայի փուլտուն անդամների բացասական դիրքորոշման հետևանքով, քանի որ մտավախություն կար, որ այդպիսով Թուրքիան նպատակ ունի ուժեղացնելու թյուրքալեզու ցեղերի դերը հետթալիբյան Աֆղանստանում։

2001 թվականի հոկտեմբերին Ջեմի այցը Ադրբեջան, Ուզբեկստան և Թուրքմենստան նպատակ ուներ ցուցադրելու Անկարայի ներգրավվածությունը Եվրասիայում։ Այն, հակառակ թուրքական դիվանագիտության հաշվարկների, չբերեց շոշափելի արդյունքներ։ Արևմտյան լրատվական գործակալությունները մատնանշեցին այդ այցի «անորոշ օրակարգի» հանգամանքը²⁰։ Իր այցի ընթացքում Ջեմը մեկ անգամ ևս, ինչպես 1990-ականների առաջին կեսին հաճախ էին անում Միջին Ասիա ժամանող թուրք բարձրաստիճան պաշտոնյաները, փորձ կատարեց «թյուրքականության»՝ զգացմունքներ արթնացնել տարածաշրջանի կառավարող էլիտայի ներկայացուցիչների շրջանում։ Աշխաբադում Ջեմը լրագրողների հետ զրույցի ընթացքում ասաց. «Մեծ ընտանիքի անդամները, որոնց արդեն այցելել եմ և կայցելեմ, այժմ ավելի լավ են հասկանում միմյանցից կախված լինելու հանգամանքը. դա է իմ այս այցի իմաստը»²¹։ Սակայն, ինչպես և 1990-ական թթ-ին, այդ մոտեցումը, ըստ դիտորդների, արձագանք չգտավ և արժանացավ բավական կտրուկ հակազդեցության²²։

Թուրքական դիվանագիտությունը մոր ակտիվություն ցուցաբերեց նաև Հարավային Կովկասում։ Փորձելով իր օգտին ծառայեցնել մոր աշխարհաքաղաքական իրավիճակը՝ Անկարան ջանքեր գործադրեց ստանալ ԱՄՆ-ի աջակցությունը և հավանությունը տարածաշրջանում երկու մոր նախաձեռնությունների համար։ Թուրքիան առաջարկեց ընդլայնել 2001 թ. սկզբին կնքված Անկարայի, Վաշինգտոնի և Թբիլիսիի միջև տնտեսական համագործակցության նախնական համաձայնագիրը՝ ներառելով նաև քաղաքական և ռազմական բնագավառները։ Ըստ Անկարայի այլ նախաձեռնության՝ առաջարկվում է ռազմական համագործակցություն հաստատել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առանցքով՝ պաշտպանելու համար Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը։ Այդ գաղափարը առաջին ան-

գամ քննարկվել է 2000թ. Տրապիզոնում՝ Թուրքիայի և Վրաստանի արտգործնախարարներ Ջեմի ու Մեհադարիշվիլիու հանդիպման ընթացքում²³:

Այս նախաձեռնությունները հակասում են Կովկասյան կայունության պակտին, որը նախապես առաջարկվել էր մույն Ջեմի և նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելի կողմից: Նրանց առաջնային նպատակն էր մեկուսացնել Հայաստանը և թուլացնել Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում: Հիշյալ նախաձեռնությունների միջոցով իրականում փորձ էր կատարվում խթանել հակաինտեգրացիոն միտումները Հարավային Կովկասում, ինչը կարող է վտանգել տարածաշրջանի կայունությունը: Դրանք նաև չէին համապատասխանում այդ շրջանում ԱՄՆ-ի ստրատեգիական շահերին և չստացան ԱՄՆ-ի աջակցությունը:

Թուրքիան նաև ձգտում էր ակտիվ դեր ստանձնել Աֆղանստանի հետպատերազմյան կարգավորման գործընթացում: Թուրքական գործուժը (մոտ հազար զինվոր) ընդգրկվեց միջազգային խաղաղապահ ուժերի կազմում: Սպասվում է, որ համաձայն իր բազմաթիվ խնդրանքների, 2002 թ. ամառվա սկզբին Թուրքիան խնդրո առարկա ուժերում կստանձնի դեկավար դեր: Տարածաշրջանում թուրքական ուժերի ճանաչումը որպես բազմազգ ուժերի առաջնորդող մաս կստեղծի մոտ, ավելի նպաստավոր իրավիճակ՝ Թուրքիայի իդժերը Կենտրոնական Ասիայում իր գերակշռող դերը վերականգնանալու առումով: Միաժամանակ, հարկ է նշել, որ Թուրքիայի հետսեպտեմբերյան քաղաքականությունը Կովկասում ավելի քիչ է հաջողվել. մասնավորապես, նա դեռ չի ստացել ԱՄՆ-ի հավանությունը իր վերը նշված նախաձեռնությունները ակտիվորեն իրականացնելու համար:

III

Որոշ դիտարկումներ Թուրքիայի հետսեպտեմբերյան քաղաքականության վերաբերյալ

Որոշումներ ընդունելու մեխանիզմը

Ժամանակակից Թուրքիայում արտաքին քաղաքականության ոլորտում որոշում կայացնելու գործընթացը որոշ առանձնահատկություններ ունի: Առաջին հերթին հարկ է նշել այդ գործընթացում զինվորականության մասնակցության համգամանքը, հատկապես Ազգային անվտանգության խորհրդում (ԱԱԽ) ռազմավարական կարևորության հարցեր քննարկելու ժամանակ, ուր զինվորականությունը վայելում է վերջնական խոսքի անառարկելի իրավունք: ԱԱԽ-ի աշխատակազմը կարևոր որոշումների համար պատրաստում է նախագծեր՝ օգտագործելով ԳՄ-ից և ԱԳՆ-ից

ստացված հանձնարարականները:

ԱԳՆ-ի աշխատակազմը պատասխանատու է առօրյա որոշումների համար, իսկ ավելի կարևոր որոշումների համար ԱԳՆ-ի միջին օղակի ներկայացուցիչները սովորաբար խորհրդակցում են ԳՄ-ի իրենց գործընկերների հետ: Այս մեխանիզմը գործի է դրվել 1980 թ. զինվորական հեղաշրջումից հետո և անխափան գործեց անցյալ երկու տասնամյակներին: Այն խախտվել է միայն Ծոցի պատերազմի ժամանակ, երբ նախկին նախագահ Թուրգուօ Օզալը իր ձեռքը վերցրեց հսկողությունը և ստիպեց պաշտոնաթող լինել և՛ արտգործնախարարին, և՛ ԳՄ պետին: Ներկա ճգնաժամի ընթացքում վարչապետ Էջլիթը փորձեց ձևափոխել այդ մեխանիզմը: Սեպտեմբերի 11-ից հետո կարևոր հարցերը քննարկվում էին քաղաքացիական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների խորհրդակցություններում, ինչպես նաև նախարարների խորհրդի նիստերին: Սակայն զինվորականության վերնախավը անվտանգության հետ կապված քաղաքականության մեջ պահպանեց իր առաջնային դերը, քանի որ սեպտեմբերի 12-ին ԱԱԽ-ի կառույցի ներքո ստեղծվեց ճգնաժամի կարգավորման կենտրոն, որի առջև նպատակ դրվեց հետևել իրադարձություններին և հանդես գալ համապատասխան առաջարկներով:

Այնուամենայնիվ, սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակմանը հաջորդած առաջին մի քանի օրերին որոշում կայացնելու գործընթացի արդյունավետությունը հարցականի տակ էր: Ըստ թուրքական մի օրաթերթի՝ «կառավարությունը կարողացավ ըմբռնել սեպտեմբերի 11-ի ողորդությունը միայն մեկ շաբաթ անց»²⁴: Սակայն հետագայում թուրքական հասարակայնությունը հակված էր ավելի դրական գնահատելու այն:

Կովկասում թուրքական դիվանագիտությունը սխալներ թույլ տվեց՝ մասնավորապես վերոհիշյալ նախաձեռնությունները հրապարակ հանելով: Տեղին է նշել, որ նախկին նախագահ Մուլեյման Դեմիրելը չվարանցեց հրապարակայնորեն քննադատել խնդրո առարկա նախաձեռնությունները և վերահաստատել Հարավկովկասյան կայունության պակտի վերաբերյալ իր առաջարկը, հատուկ նշելով մրա մեջ Հարավային Կովկասի բոլոր պետությունները ընդգրկելու անհրաժեշտությունը:

Թուրքիայի արտաքին քաղաքականության ստրատեգիական պլանավորումը կատարվում է ԱԳՆ-ի, նրա վերլուծական դեպարտամենտի ու ստրատեգիական վերլուծությունների ինստիտուտի կողմից, ինչպես նաև փաստորեն մրան կից գործող այնպիսի հետազոտական կենտրոնների կողմից, ինչպիսիք են ASAM-ը և TESEV-ը, որոնց ղեկավար կազմի կորիզը կազմում են նախկին բարձրաստիճան դիվանագետները²⁵: Սակայն հետսեպտեմբերյան գործընթացները դրդեցին բարձրագույն զինվորականությանը ստեղծել իր անմիջական հսկողության տակ գտնվող ստրա-

տեղիական հետազոտությունների կենտրոն՝ SAREM-ը, որի տնօրենը գեներալ է²⁶։ Բավական հատկանշական փաստ է. ըստ ամենայնի, զինվորական վերնախավը լիովին չի վստահում երկրի քաղաքական ղեկավարությանը և պատրաստվում է ընդլայնել իր դերը արտաքին քաղաքականության ստրատեգիական պլանավորման ոլորտում։

Ներքին գործունեք

Թուրքիայի հասարակական կարծիքը գերակշռող մեծամասնությամբ դեմ էր Աֆղանստանում ԱՄՆ-ի գլխավորած պատերազմին՝ մոտ 70%-ը դեմ էր ռազմական գործողություններին, իսկ 90%-ը՝ Աֆղանստան թուրքական զորքեր ուղարկելուն²⁷։ Սակայն հասարակությունը հազվադեպ է ընդդիմանում կառավարության քաղաքականությանը, իսկ հակակառավարական և հակամտերիկյան բողոքի ցույցերը փոքրաթիվ էին։ Այս փաստը բացատրվում է այսօրվա Թուրքիայում իսլամանետ քաղաքական ուժերի պառակտվածությամբ ու թուլությամբ, ինչպես նաև արմատական ազգայնական՝ պանթյուրքիստական խմբերի ու խմբավորումների ազդեցության աճով։ Եթե իսլամիստները որոշ գոյշ փորձեր կատարեցին քննադատելու կառավարության «հակաիսլամական» քայլերը, ապա շատ պանթյուրքիստական կազմակերպություններ պաշտպանեցին Եվրասիայում թուրքական ազդեցության ընդլայնման կառավարության քաղաքականությունը։

Իրաքի խնդիր

Թուրքիայի քաղաքացիական և զինվորական ղեկավարությունը հաստատում կերպով բազմիցս հայտարարել է, որ դեմ է Իրաքի դեմ որևէ ռազմական գործողության ծավալմանը։ Թուրքիան մտավախություն ունի, որ Իրաքի փլուզումը կնպաստի Հյուսիսային Իրաքում քրդական պետության կազմավորմանը, որը կխթանի նաև Հարավարևելյան Թուրքիայի քրդերին պահանջել քաղաքական անկախություն։ Բնականաբար, այդպիսի զարգացումը Թուրքիայի համար անընդունելի է։

Իրականում Անկարան չունի բավարար լծակներ Իրաքի վրա ԱՄՆ-ի հարձակումը կանխելու համար, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Սադամ Հուսեյնի դեմ ռազմական գործողությունների ծավալման դեպքում Թուրքիան կուղարկի իր զորքերը Իրաքի հյուսիսային շրջան և կփորձի իր շահերին ծառայեցնել Մոսկվի շրջակայքում ապրող թյուրքախոս փոքրամասնությանը։ Թուրքիան, ըստ ամենայնի, ձգտելու է մուտք ստանալ դեպի իրաքյան նավթահանքերը և իր համար տեղ ապահովել Իրաքի ապագա

քարտեզը գծողների շարքում: Իսկ դրան կարելի է հասնել միայն ռազմական գործողություններին մասնակցելով: Հավանաբար, այդ նկատառումներից ելնելով, Թուրքիան դեկտեմբերի սկզբին Հյուսիսային Իրաքում 500 զինվորից բաղկացած հատուկ ստորաբաժանում և ավելի քան 120 տանկ տեղակայեց՝ այսպիսով զգալիորեն ավելացնելով արդեն իսկ այնտեղ տեղակայված զորքերի և զինվորական տեխնիկայի թվաքանակը²⁸:

Թուրքիայի 2001թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների քաղաքականության վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգելու հետևյալ եզրակացության. մեր հարևան պետությունը ձգտում է, ակտիվ դերակատարություն ստանձնելով սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողության հետևանքով աշխարհում և մասնավորապես Եվրասիայում ընթացող գործընթացներում, ընդլայնել իր ազդեցության ոլորտները: Թե որքանով դա կհաջողվի, ցույց կտա ժամանակը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Cumhuriyet, 23. 01. 1992.
2. Stb. Turkish Foreign Policy, – <http://www.mfa.gov.tr/>:
3. Özey R. Jeopolitik ve Jeostratejik Açidan Türkiye. Istanbul, 1998, s. 57–59.
4. Yılmaz M. Türkiyenin Geo–Stratejisi Açısından Günümüz Olaylarının Değerlendirilmesi. – Üçüncü 1000'E Girerken Türkiye: Kutlu Doğum Sempozyumu – 1999. Yayına Hazırlayan: Ömer Turan. Ankara, 2000, s. 72.
5. Sander O. Turkish Foreign Policy: Forces of Continuity and Change. – Turkish Review, Winter 1993, Volume 7, Number: 34, pp. 45–46.
6. Perinçek D. Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika Istanbul, 1996.
7. Թուրքիայի բարձրագույն զինվորականության մոտեցումները և ընկալումները լավագույնս արտահայտված են Գլխավոր շտաբի նախկին հրամանատար Նեջիի Թորումթայի գրքում: Տե՛ս Torumtay N. Değişen Stratejilerin Odagında Türkiye. Istanbul, 1996:
8. Ergüvenç S. Turkey's Strategic Importance in Military Dimension: A Regional Balance Holder. – Turkey at the Threshold of the 21st Century: Global Encounters and/vs Regional Alternatives. Ed. By: Mustafa Aydın. Ankara, 1998, p.63. Հեղինակն, ըստ երևույթին, Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ է:
9. Տե՛ս այդ մասին. Ögüt K. Avrasya Stratejileri Üzerine. – Aydınlanma 1923, Sayı: 21 (ինտերնետային տարբերակ):
10. Տե՛ս, օրինակ, նրա համապատասխան հայտարարությունը, որը տպագրված է հետևյալ պարբերականի էջերում. Avrasya Dergisi, II, (ինտերնետային տարբերակ):

11. Տե՛ս. Ծցւթ Կ. Արայսա Տրաթէյլերի Օթերինե. – Այճինլանմա 1923, Տայի: 21 (իմտերնետային տարբերակ).
12. Gökay B., Langhorn R. Turkey and the New States of the Caucasus and Central Asia. London, 1996, p.2.3.
13. 1990–ականների Թուրքիայի եվրասիական քաղաքականության հետազոտումը սույն հոդվածի խնդիրը է:
14. Այդ խնդիրներին հանգամանալից անդրադարձել ենք 2001 թ.: Տե՛ս. Safrastian R. Armenia must get rid of its complex of Russia's younger brother. – The Noyan Tapan Highlights, 2001, 19 July, pp. 6, 8; Safrastian R., Turkey finds it possible to peddle influence in the South Caucasus. – The Noyan Tapan Highlights, 2001, 27 September, pp. 8, 15; ինչպես նաև, Ռ. Սաֆրաստյան, Թուրքիան՝ աշխարհաքաղաքական փնտրտուքի մեջ, «Երկիր», 21 սեպտեմբերի, 2001:
15. Hürriyet, 14. 09. 2001.
16. Milliyet, 2. 10. 2001.
17. Star, 2. 10. 2001.
18. Milliyet, 28. 09. 2001.
19. Turkish Daily News, October 15, 2001.
20. Stu Steve Bryant. Turkey woos ex-Soviet states over Afghan crisis. – In: Reuters English News Service, 10/22/2001.
21. Ibid.
22. Ibid.
23. Turkish Daily News, 18. 10. 2001.
24. Tükiye, 15. 10. 2001.
25. Փաստորեն, բոլոր այդ կառույցները ստեղծվել են մախորդ տասնամյակում, երբ կտրուկ փոխվեց Թուրքիայի արտաքին քաղաքական միջավայրը: Նույն տարիներին հիմնադրվեցին նաև մի շարք այլ վերլուծական կենտրոններ, որոնց մի մասը ֆինանսավորվում է այլևայլ քաղաքական ուժերի ու գործարար շրջանակների կողմից և այդպիսով դուրս է մնում կառավարության անմիջական հսկողությունից:
26. Milliyet, 27. 12. 2001.
27. Turkish Daily News, 4. 10. 2001.
28. Stu Özgür Politika, 7. 12. 2001.

ԹՈՒՐԶԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ТУРКОЛОГИЧЕСКИЕ И ОСМАНИСТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
TURKISH AND OTTOMAN STUDIES

Հրատարակչության գլխավոր տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնօրեն՝ ՄԱՇԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍՐՅԱՆ
Համակարգչային ծնագիրորումը՝ ՎՄԻԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ
Կազմի ծնագիրորումը՝ ԵՓՐԵՍ ՍԱԿԱՅԱՆ
Սրբագրիչ՝ ՆՎԱՐԴ ՓԱՐՍՄԱՆՅԱՆ

Տպագրությունը՝ օձսեք
Չափսը՝ 80x84 1/16
Թուղթը՝ օձսեք
Ծավալը՝ 7.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500 օրինակ
Գինը՝ պայմանագրային

«Զանգակ-97» հրատարակչություն
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8
Հեռ. 54-89-32, 54-05-17: E-mail: zangak@arminfo.com .
Տպագրվել է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում

ԳԼԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090482